


ԵՐԵՎԱՆԻ ՄՍԻՊԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊՐԱԳԱ ԲԺՇԻՇԿ

2014 ԹՎԱԿԱՆ N 10-11 (1304-1305) ՍԵՊՏԵՄԲԵՐ



Մեայրենների 1-ը գիտելիքի, գրի
և դպրության օրն է: Այս առիթով և նոր ուսումնական
տարվա կապակցությամբ շնորհավորում ենք բոլորին:



Միջնադարի հայ մեծ բժշկապետ
Մխիթար Ներսիսյանը անունը կրող
Երևանի պետական բժշկական
համալսարանը առանձնակի
ջերմությամբ ողջունում է
նորեկներին՝ առաջին
կուրսեցիներին:



ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Ավանդույթի համաձայն՝ առաջին կուրսեցիներին ողջունեց համալսարանի ռեկտորը



Հանդես գալով ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական և ռազմաբժշկական ֆակուլտետների առաջին կուրսեցիների առջև՝ ռեկտորը նշեց. «Շնորհավորում եմ բոլորիդ՝ երևանի պետական բժշկական համալսարան ընդունվելու կապակցությամբ: Հին հունական այսպիսի ասացվածք կա. «Նախագգուշացված ես, ուրեմն՝ զինված ես»: Ես ցանկանում եմ ձեզ նախագգուշացնել և զինել անհրաժեշտ նախնական այն գիտելիքներով, որոնք ձեր մեկնարկը բժշկական աշխարհի կղարծեն հաջողակ: Ձեր ուսումը կսկսեք այն գիտելիքների ուսումնասիրությամբ, որոնք անհրաժեշտ են բժշկական հիմնարար գիտություններն ընկալելու համար, այնուհետև կանցնեք այնպիսի գիտությունների ուսումնասիրությանը, առանց որոնց բժշկագիտությունը՝ որպես մասնագիտություն գոյություն ունենալ չի կարող: Դրանք կլինեն ձեր բազային գիտելիքները՝ կլինիկա մուտք գործելու համար: Հետո կսկսվի ուսման շատ հետաքրքիր, բովանդակալից և տարբերվող փուլ, որը կոչվում է կլինիկական ուսուցում: Ձեր առջև կբացվի բժշկագիտությունը, բժշկական աշխարհը, և հենց այդ պատասխանատու տարիներին դուք կսկսեք ընտրել բժշկական ձեր մասնագիտությունը, որից հետո կուղղորդվեք բժշկական շարունակական կրթության շրջան, որովհետև այն, ինչպես նաև անընդհատ ինքնակրթությունը բժշկի գործունեության անբաժան մասն են կազմում: Իսկ ԲՈՒՀ-ի ղեկա-

վարությունը և պրոֆեսորադասախոսական կազմը, առաջնորդվելով բազմաթիվ տարիների բարի ավանդույթներով, կաջակցեն ձեզ այս դժվարին և հետաքրքիր ճանապարհին: Եվ միշտ հիշեք դարերից եկած այս ճշմարիտ խոսքերը՝ «Հաջողությունն ընտրում է պատրաստվածներին»:

Շնորհավորելով ստոմատոլոգիական ֆակուլտետի առաջին կուրսեցիներին՝ Միքայել Նարիմանյանն ասաց. «Ցանկանում եմ նշել, որ երբ ես էի ուսանում այս ԲՈՒՀ-ում, ստոմատոլոգիական ֆակուլտետ ընդունվողների թիվը չէր անցնում 30-ը, իսկ այսօր այստեղ ընդունվածների մեծ թիվը կարող է փաստել միայն մեկ բան, որ մեր երկրում զարգանում է ստոմատոլոգիան, ինչն ուրախալի է: Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ՝ այս զեղեցիկ օրվա կապակցությամբ և մաղթում հաջողություններ այն բարդ ու հետաքրքիր գործընթացում, որը կոչվում է ուսումնառություն»:

Դեղագիտական ֆակուլտետի առաջին կուրսեցիներին շնորհավորելով և նրանց ներկայացնելով ԲՈՒՀ-ի ղեկավարությանը՝ ռեկտորը նշեց, որ նրանք ընդունվել են մի կարևորագույն ֆակուլտետ, որն իր ուրույն տեղն ունի բժշկագիտության մեջ. «Ողջ աշխարհում ձեր ընտրած մասնագիտությունը մեծ տեղ է զբաղեցնում թե՛ գիտության մեջ, թե՛ բժշկական պրակտիկայում, քանի որ դեղագիտությունը կազմում է այն հիմքը, որը մատակարարում է բժշկական պրակտիկան դեղորայքով, և դժվար է պատկերացնել բժշկական որևէ ուղրոտ՝ առանց այդ բազայի: Եվ այդ պատասխանատվությունը դուք պետք է զգաք ուսման առաջին իսկ

օրերից, որովհետև առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ այն վնասը, որ պացիենտները ստանում են դեղորայքի սխալ օգտագործումից, գերազանցում է ամենադաժան վարակների կողմից առաջացրած խնդիրները: Ցանկանում եմ մեկ անգամ ևս նշել, որ այս գործում պատասխանատվությունը շատ մեծ է, և դուք պետք է դա գիտակցեք»:

Դիմելով ռազմաբժշկական ֆակուլտետի առաջին կուրսեցիներին՝ ռեկտորը շնորհավորեց նրանց և ասաց. «Ռազմաբժշկական ֆակուլտետի ստեղծման գործում կարևորում եմ հատկապես ՀՀ պաշտպանության նախարարության դերը: Այս տարի մենք նշեցինք ֆակուլտետի կազմավորման 20-ամյա հոբելյանը: Ցանկանում եմ հատկապես կարևորել մեկ փաստ. ռազմական բժշկությունն ունի 2 ուղղվածություն՝ պատերազմի դաշտում, պատերազմական պայմաններում զարգացող ռազմաբժշկությունը և մեր բանակի առողջապահության ապահովումը: Մենք ցանկանում ենք, որ բանակում գտնվող մարդիկ, նրանց ընտանիքները լինեն առողջ և ամուր, քանի որ նաև դա է հզոր բանակի, հետևապես նաև՝ ամուր պետության հիմքը»:

ԱՊՐԱԿ ԲԺԻՇԿ
 Գլխավոր խմբագիր
ՍԵԴԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
 Editor Seda KH. TOROSYAN
 Թղթակից
 ԱԻՂՎ ՀԱԿՈՅԱՆ
 Անգլերեն նյութերի պատասխանատու
 ԱՆԱՅԻՏ ԴԵՍՈՒՐՉԱՆ
 Համակարգչային ձևավորումը
 ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
 Լրատվական գործունեություն իրականացնող՝
 Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
 բժշկական համալսարան պետական ոչ
 առևտրային կազմակերպություն:
 Գրանցման վկայական N 03Ա054456, տրված 2000թ:
 Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության
 նախարարությունում:
 Գրանցման վկայական N 299: Տպագրվում է
 «ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՄ» ՄԴԸ հրատարակչությունում:
 Հասցե՝ Երևան 0025, Կորյունի փ. 2
 Հեռախոս՝ (060) 62-12-46, 2-46,
 E-mail: apagabzhishk@ysmu.am
 Ծավալը՝ 40 էջ:
 Տպաքանակը՝ 500 օրինակ:
 Անվճար:

Handwritten text in a circular frame, possibly a stamp or seal, containing several lines of cursive script.

Goodbye, my beloved
We will always
to visit you and
your achievements



Handwritten text below the circular frame, including the word "Duck" and other cursive script.

Handwritten text in the bottom left corner, including the word "Duck" and other cursive script.

I am so proud
the graduate
of has given
necessary
feature.

Անցած ուսումնական տարվա ավարտին...

ԲԺՇԿԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԻՋՕՐԵԱԿԱՆՆԵՐՈՒՄ



Երևանի Մխիթար Ջերացու անվան պետական բժշկական համալսարանում օտարերկրացի, ապա նաև տեղացի ուսանողների ավարտական հանդիսությունները վաղուց արդեն վերածվել են ավանդույթի: Անցած ուսումնական տարվա ավարտին կայացած արտասահմանցի ուսանողների ավարտական միջոցառման ընթացքում այս տարի ԵՊԲՀ-ի ավարտական դիպլոմ էին ստանում Իրանի Իսլամական Հանրապետությունից, Հնդկաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Սիրիայի Արաբական Հանրապետությունից, Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ղազախստանից, Լիբանանից, Իրաքի Դաշնակցային Հանրապետությունից, Նամիբիայից և Կանադայից 97 շրջանավարտներ:

Միջոցառմանը հրավիրված էին Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբուն, Հնդկաստանի դեսպանության առաջին քարտուղար Սոհինդեր Կոշիկը, Հայաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Սոհամմադ Ռեյխիմ, Իրանի դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ պարոն Հոսեյն Մանուչեհրին, Սիրիայի դեսպանության կուլտուրայի գծով հյուպատոս տիկին Ռանա Խայատը, Ռուսաստանի Դաշնության դեսպանության խորհրդական պարոն Օլեգ Շապավալովը, դեսպանատների ներկայացուցիչներ:

ԵՊԲՀ օտարերկրացիների ուսուցման ֆակուլտետի դեկան Աննա Սարգսյանը ներկայացրեց այն դժվար ուղին, որ անցել են ուսանողները՝ այս հանդիսավոր օրվան հասնելու և ԵՊԲՀ շրջանավարտ դառնալու համար: Ներկայացրեց նաև այն ուսանողներին, ովքեր պետական ավարտական ատեստավորման բանավոր քննության ընթացքում

լավ արդյունքներ են ցուցաբերել՝ Ռաուլ Սեֆի (Հնդկաստանի Հանրապետություն), Վարդան-Տիգրան Աբրահամյան (Կանադա), Սերժ Սամբուլ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Ղեհ Սալեհմին (Իրանի Իսլամական Հանրապետություն), Մելքոն Արպաճյան (Լիբանանի Հանրապետություն), Մելինե Բաղդասարյան (Ռուսաստանի Դաշնություն):

Այնուհետև բժշկապետի երդումը հայերեն կարդալու համար բեմ հրավիրվեց հնդիկ շրջանավարտ Ռաուլ Սեֆին:

Երդման արարողությունից հետո շրջանավարտներ ենմանուել Բաղդասարյանը (ընդհանուր բժշկության ֆակուլտետ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Ռոհիդ Չոդեն (ընդհանուր բժշկության ֆակուլտետ, Հնդկաստանի Հանրապետություն), Սերժ Սամբուլը (դեղագիտական ֆակուլտետ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Մելինե Բաղդասարյանը (ստոմատոլոգիական ֆակուլտետ, Ռուսաստանի Դաշնություն), Սերիֆար Չարխանդին (ստոմատոլոգիական ֆակուլտետ, Իրանի Իսլամական Հանրապետություն) ելույթ ունեցան և շնորհակալություն հայտնեցին իրենց ծնողներին, ԵՊԲՀ դեկավարությանը և պրոֆեսորադասախոսական կազմին՝ այս տարիների ընթացքում իրենց հանդեպ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի և ստացած գիտելիքների համար:

Դահլիճը մեծ ոգևորությամբ ընդունեց հատկապես հնդիկ շրջանավարտ Ռոհիդ Չոդեի ելույթը, ով հայերեն արտասանեց Համո Սահյանի «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ» բանաստեղծությունը:



**ՄԻՔԱՅԵԼ ՆԱՐԻՍԱՆՅԱՆ
(ԵՊԲԴ ռեկտոր)**

Միրելի՛ շրջանավարտներ, ծնողներ, դեսպաններ, հյուրեր, սրտանց ողջունում և շնորհավորում եմ ձեզ՝ այս կարևոր և հանդիսավոր օրվա կապակցությամբ: Ցանկանում եմ նշել, որ մեր ԲՈւԴ-ում մի ողջ անձնակազմ է աշխատում հատուկ արտասահմանցի ուսանողների համար՝ դասախոսներ, պրոֆեսորներ, կլինիկաների աշխատակիցներ, և նրանց ևս այսօր շնորհավորում եմ և շնորհակալություն եմ հայտնում այն բարդ ու պատասխանատու աշխատանքի համար, որ նրանք են իրականացնում: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում և շնորհավորում եմ նաև դեսպաններին, դեսպանատների աշխատակիցներին: Մեր ուսանողների ծնողները մեծ և կարևոր քայլ են կատարում՝ ուղարկելով իրենց երեխաներին այլ երկրում սովորելու, և հենց այստեղ է կարևորվում դեսպանատների աշխատանքը, քանի որ ուսման տարիների ընթացքում նրանք են հանդիսանում կապող օղակը ուսանողների և նրանց ծնողների միջև: Եվ այսօր, շնորհավորելով մեր շրջանավարտներին, ցանկանում եմ ընդգծել նրանց կատարած քայլի կարևորությունը, քանի որ նրանք ընտրել են մասնագիտություն ողջ կյանքի համար: Մաղ-



թում եմ ձեզ բազմաթիվ հաջողություններ ձեր ընտրած մասնագիտության մեջ և հուսով եմ, որ ձեզանից շատերը կշարունակեն իրենց հետբուհական կրթությունը և մասնագիտացումը մեր համալսարանում: Իսկ մենք շատ ուրախ կլինենք շարունակելու նման համագործակցությունը:



**ՍՈՒՐԵՇ ԲԱԲՈՒ
(Հայաստանի Հանրապետությունում
Հնդկաստանի արտակարգ
և լիազոր դեսպան)**

Ինձ համար մեծ հաճույք է ներկա գտնվել այստեղ, քանի որ այսօր շատ կարևոր և հանդիսավոր օր է բոլորիս համար: Այսօր մեր շրջանավարտները ստանում են իրենց հետագա կյանքի անձնագիրը: Բժշկական կրթության 6 տարիները երևանի պետական բժշկական համալսարանում ունեն երկար պատմություն, և այսօր արդեն դուք արհեստավարժ ու գիտակ մասնագետներ եք: Շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ օրվա կապակցությամբ և մաղթում ամենալավն ու բարին:



**ՄՈՂԱՄՍԱԴ ՌԵՅԻՍԻ
(Հայաստանի Հանրապետությունում
Իրանի
արտակարգ և լիազոր դեսպան)**

Միրելի՛ շրջանավարտներ, անչափ ուրախ եմ, որ այսօր ձեր կողքին եմ և մասնակցում եմ այս միջոցառմանը, որն իսկապես վեհաշուք է: Կարծում եմ՝ մարդկության քաղաքակրթության և երջանկության գաղտնիքը գիտության մեջ է, և Աստված տվել է մարդուն գիտելիք ստանալու շնորհը, իսկ խավարատությունն ու տգիտությունն ամենամեծ դժբախտություններն են: Ձեռք բերելով գիտելիքներ՝ դուք գտնվում եք մարդկությանը ծառայելու ճանապարհին, և դա է ձեր ընտրած մասնագիտության առաքելությունը: Ցանկանում եմ շնորհավորել ձեզ, մաղթել մասնագիտական հաջողություններ, նաև շնորհակալություն հայտնել պրոֆեսոր Մ. Նարինյանին և իր գործընկերներին՝ ներդրած ջանքերի համար:



YSMU Foreign Graduates on the Way to New Endeavors

The graduation ceremony of YSMU foreign students took place in the Yerevan State Medical University after M. Heratsi. Diplomas were received by 97 YSMU students from Iran, India, USA, Syria, Georgia, Russia, Kazakhstan, Lebanon, Iraq, Namibia and Canada.

Among the invitees were Souresh Babu, Ambassador Extraordinary and Plenipotentiary of India in the Republic of Armenia, Mohinder Kaushik, First Secretary, Mohammad Raiesi, Ambassador Extraordinary and Plenipotentiary of Iran in the Republic of Armenia, Hosein Manouchehri, Head of Consulate Department of the Embassy of Iran in the Republic of Armenia, Rana Khayat, Attache of the Embassy of Syria in the Republic of Armenia, Oleg Shapavalov, Advisor of the Embassy of Russia in the Republic of Armenia, and other representatives of embassies. YSMU Rector Michael Narimanyan

welcomed the graduates and the guests and extended his congratulations to them. He mentioned congratulated the department of foreign students functioning in the University, i.e. lecturers, professors, employees of clinics. He also extended his gratitude to ambassadors and embassy staffs. As he noted, parents of the University students make an important step by sending their children to another country for education, and here the work of embassies is considered of importance since during all those years it is embassy ensuring the contact between them. He also considered the graduates' choice of becoming a doctor of importance and expressed hope that many of the graduates will continue PhD studies in the University within the frame of their specialization.

Anna Sargsyan, the Dean of the Foreign Students Department, also extended her congratulations to the



In the photos: Mohammad Raiesi, Ambassador Extraordinary and Plenipotentiary of Iran in the Republic of Armenia and Souresh Babu, Ambassador Extraordinary and Plenipotentiary of India in the Republic of Armenia with graduates



graduates. She made a presentation over the difficult path that was overcome by students before reaching the moment of graduation, and also introduced the students with high marks during state graduation examination, specifically Rahul Seti, India,

Vardan-Tigran Abrahamyan, Canada, Serzh Sambul, USA, Gheh Salehmin, Iran, Melkon Arpachyan Lebanon, Meline Baghdasaryan, Russia.

At a later stage Rahul Seti was invited to the stage to read Heratsi oath in Armenian.

After the oath-taking, Mohammad Raiesi, Ambassador Extraordinary and Plenipotentiary of Iran in the Republic of Armenia, extended congratulations to the graduates, and expressed gratitude to Michael Narimanyan and the University staff.

Souresh Babu, Ambassador Extraordinary and Plenipotentiary of India in the Republic of Armenia, also congratulated the graduates and noted that the 6 years of medical education have a history.

After the oath-taking YSMU graduates Emmanuel Baghdasaryan, General Medicine Faculty, USA, Meline Baghdasaryan, Stomatology Faculty, Russia, Serzh Sambul, Pharmacology Faculty, USA, Merifar Charkhandi, Stomatology Faculty, Iran, and Rohid Choden, General Medicine Faculty, India, made speeches extending their gratitude to their parents, the YSMU management and lecturers, for their kind attitude and knowledge given to them. Rohid Chode's speech was greatly welcomed by the guests, as he recited a poem by Hamo Sahyan.





ԵՐԴՎՈՒՄ ԵՍ, ԵՐԴՎՈՒՄ ԵՍ, ԵՐԴՎՈՒՄ ԵՍ...

Ուսումնական տարվա ավարտին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ Երևանի Մխիթար Դերասցու անվան պետական բժշկական համալսարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստը, որը նվիրված էր 2014-ի ավարտական հանդիսությանը:

Նիստը բացեց և շրջանավարտներին շնորհավորեց ԵՊԲԶ ռեկտոր Միքայել Նարինյանը. «Սիրելի՛ շրջանավարտներ, տարիներ առաջ ձեր ներքին մղումով, ձեր ծնողների խորհրդով և մեկ երազանքով՝ դառնալ լավ բժիշկ և հմուտ մասնագետ, դուք ընտրել եք մեր ԲՈՒՅ-ը, մեր մասնագիտությունը: Անցան երբեմն դժվար, բայց միշտ հետաքրքիր ուսման տարիները, և այսօր մասնագիտությունը, որը դուք ընտրել եք, ընդունում է ձեզ: Մեր մասնագիտության մեջ կա մի ոգևորիչ, կարևոր և պարտադրող երևույթ, որն ուղղորդում է մեզ ամբողջ կյանքում. դա հայ բժշկի երդումն է: Տվեք, ընդունեք այսօր այդ երդումը և միշտ հավատարիմ եղեք դրա իմաստուն խոսքերին: Սիրելի շրջանավարտներ, երիտասարդ կուլեգաներ, ընդունեք մի կարևոր խորհուրդ՝ ձեր ուսուցիչներից, ձեր ավագ ընկերներից. երբեք մի բավարարվեք ձեր ստացած գիտելիքներով ու մասնագիտական ունակություններով: Սովորեք, զարգացեք և կատարելագործվեք ամբողջ կյանքի ընթացքում, և ձեր կյանքը կդառնա հետաքրքիր, իմաստավից, իսկ իրենց կյանքը ձեզ վստահած մարդիկ կլինեն ապահով ձեռքերում: Եվ միշտ հիշեք, որ հաջողությունն ընտրում է պատրաստվածներին»:

Ռեկտորը շրջանավարտներին փոխանցեց նաև ԴԴ կրթության և գիտության նախարար, ԲՈՒՅ-ի կառավարման խորհրդի նախագահ Արմեն Աշոտյանի շնորհավորանքն ու բարենաղթանքները:

Իր երիտասարդ գործընկերներին շնորհավորելու էր եկել նաև ԴԴ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը:

Շրջանավարտներին օրհնեց և հայրապետական բարենաղթանքը հղեց Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանը. «Բժշկությունը մի մասնագիտություն է, որը չի ճանաչում ո՛չ մտերիմ, ո՛չ հարազատ, ո՛չ թշնամի: Սիրելի շրջանավարտներ, ես վստահ եմ, որ ոչնչով հնարավոր չէ վարձահատույց լինել բժիշկներին իրենց առաքելության համար, ձեր այն տառապալից, դժվարին ջանքերի համար, որոնք ի գործ եք դնելու մարդկանց օգնելու նպատակով: Մաղթում եմ ձեզ ամենայն բարիք, և թող Աստված օրհնի ձեր ուղին»:

Այնուհետև շրջանավարտները երգվեցին լինել Դիպոկրատի, Մխիթար Դերասցու և այլ մեծանուն բժշկապետերի ավանդույթների արժանի հետևորդներ: Երդման արարողությունից հետո այն շրջանավարտներին, ովքեր ուսման տարիներին ցուցաբերել են փայլուն առաջադիմություն, ամփոփիչ քննական հանձնաժողովների նախագահները հանձնեցին առաջին կարգի (կարմիր) դիպլոմներ:

Դիպլոմների հանձնումից հետո շրջանավարտներին տեսաշարով իրենց շնորհավորանքներն ու բարենաղթանքները հղեցին ԵՊԲԶ ֆակուլտետների ղեկավարները:

Հանդիսավոր նիստի պաշտոնական մասին հաջորդեց տոնական հատվածը՝ համերգային և հումորային ծրագրով, որն ապահովեց մասնակիցների և հյուրերի բարձր տրամադրությունն ու միջոցառման ջերմ մթնոլորտը:



ԵՊԲՅ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԹՎՈՒՄ

Անցած ուսումնական տարվա ավարտին կայացավ «Տարվա լավագույն բժիշկ, տարվա լավագույն բուժօգնական» ամենամյա մրցանակաբաշխությունը, որը կազմակերպվել էր «Համազգային վստահություն» խորհրդի կողմից:

Առողջապահության ոլորտի արժանիներին որոշելու համար «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնը հարցումներ էր անցկացրել բուժօլորտի մասնագետների և ազգաբնակչության շրջանում, որի արդյունքում «Հուստ աստղ» մրցանակին արժանացան նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի աշխատակիցները:

վանակարգում, որն ավելի է մեծացնում պատասխանատվությունը: Սակայն այս մրցանակը միայն ինը չէ. այն ծավալուն աշխատանքի արդյունք է՝ համծիսս բժշկական համալսարանի աշխատակազմի և իմ ուսուցիչների, և այն ցանկանում են մվիրել նորածին դստերս», - ասաց Գագիկ Միրիջանյանը:

«Պլաստիկ վիրաբուժության բնագավառում տարվա բացառիկ վիրահատություն» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակին արժանացավ ԵՊԲՅ պլաստիկ վիրաբուժության ամբիոնի վարիչ, պլաստիկ վիրաբուժության և միկրովիրաբուժության կլինիկայի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Արտավազ Բագրատի

մրցանակին արժանացավ ԵՊԲՅ նյարդաբանության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Հովհաննես Մորիսի Մանվելյանը: «Ցավոք, հասարակությունն ըստ արժանվույն չի գնահատում բժշկի աշխատանքը, և այսօր ավելի հեշտ է ստանալ ժողովրդական արտիստի, նկարչի, արվեստի վաստակավոր գործչի կոչում, քան բժշկագիտության մեջ որևէ մրցանակի արժանանալ: Սա ոչ թե պետական շքանշան է, այլ հասարակության կողմից քո աշխատանքի գնահատականը, և սրանից ավելի կարևոր բան բժշկի համար, վստահեցնում են՝ չկա: Շատ պատվաբեր է ստանալ տարվա բժիշկ մրցանակը երրորդ անգամ», - շնոր-



«Բարձրագույն մասնագիտական կրթության տարվա կազմակերպիչ» անվանակարգում մրցանակի արժանացավ ԵՊԲՅ աշխատակազմի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Գագիկ Մուշեղի Միրիջանյանը: Շնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին՝ Գագիկ Միրիջանյանը նշեց, որ բժշկությունը, լինելով ամենաբարդ աշխատանքներից մեկը, հաճախ ըստ արժանվույն չի գնահատվում, և նմանատիպ միջոցառումները կարևոր են, որպեսզի բժիշկը նոր եռանդով շարունակի աշխատել: «Ինձ համար պատվաբեր է մրցանակ ստանալ այս ան-

Սահակյանը: «Այսպիսի օբյեկտիվ և արդարացի միջոցառումները հասարակության մեջ իրենց դրական դերակատարումն են ունենում բժշկի աշխատանքի գնահատման գործում: Հաճելի է, երբ այսօր թողնես ուրախանում են իմ մրցանակով, բայց ես միշտ աշխատել և շարունակում եմ աշխատել այնպես, ինչպես ամբողջ կյանքում», - ասաց վիրաբույժը:

«Բժշկական գիտելիքների նորագույն մեթոդների կիրառման, ուսուցման և կրթադաստիարակչական աշխատանքների համար» անվանակարգում «Հուստ աստղ»

հակալություն հայտնելով մրցանակաբաշխության կազմակերպիչներին՝ ասաց Հովհաննես Մանվելյանը:

Նշենք, որ միջոցառման նպատակն էր ներկայացնել և պատվի արժանացնել առողջապահության ոլորտում իրենց ձեռքբերումների ու եռանդի շնորհիվ ազգաբնակչության գնահատականին արժանացած լավագույն մասնագետներին ու կազմակերպություններին:

YSMU Staff Among the Best in Healthcare Field



On July 7 the “Best Doctor of the Year, Best Medical Institution of the Year” Award took place in National Opera and Ballet House. The award ceremony was organized by “National Trust” council.

The “Sociometer” Center has conducted sociological survey among medical specialists and general population aimed at defining the best in healthcare field. As a result of surveys YSMU staff received “Huso Astgh” (“Star of Hope”) award.

Associate Professor Gagik Miridjanyan, YSMU Head of Staff, received an award in “Organizer of the Year’s Higher Vocational

Education” nomination.

Thanking the organizers Gagik Miridjanyan mentioned that the medicine being one of the complicated fields, is frequently not appreciated properly, and such kind of events are considered of importance as they promote the doctor to continue working with enthusiasm.

Associate Professor Artavazd Sahakyan, Head of the Plastic Surgery Department, Head of the Plastic Surgery and Microsurgery Clinic, received a “Huso Astgh” award in “Exclusive Surgery of the Year in the Field of Plastic Surgery” nomination.

He said that such objective events have their positive role in the society in the appreciation of doctor’s work.

Professor Hovhannes Manvelyan, MD, PhD, Head of YSMU Neurology Department, received the “Huso Astgh” award of the “Application of innovative methods of medical knowledge and educational works”.

It is worth mentioning that the aim of the event was to present and honor the best specialists and organization who has received the nation’s appraisal through their achievements and enthusiasm.



ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Երևանի Մ. Հրեացու անվան պետական բժշկական համալսարանի անցած ուստարվա շրջանավարտները, պրոֆեսորադասախոսական կազմը և առողջապահական ոլորտի տարբեր սերունդների առաջատար մասնագետները հանդիպեցին ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի հետ: Նախարարին և հյուրերին ողջունեց ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանյանը: «Սիրելի՛ շրջանավարտներ, դուք մեկ անգամ արդեն կատարել եք ձեր ընտրությունը՝ բժշկական համալսարանն ընտրելով որպես ձեր մասնագիտական կյանքի մայր բուհ և այժմ պետք է ընտրություն կատարեք՝ որոշելու ձեր կոնկրետ մասնագիտությունը: Ու քանի որ բժշկական մասնագիտությունները բազմաթիվ են, և նեղ մասնագիտացման որոշումը հեշտ չի կայացվում, մենք խնդրեցինք ՀՀ առողջապահության նախարարին կիսվել ձեզ հետ իր մտորումներով, խորհուրդներով, փորձով: Եկեք այսօրվա դասախոսությանը տանք «Երիտասարդի մասնագիտության ընտրության մտորումներ» խորագիրը»:

Ողջունելով ներկաներին, ինչպես նաև իր ուսուցիչներին, ավագ և երիտասարդ գործընկերներին՝ Արմեն Մուրադյանը մեզ, որ հանդիպման հիմնական նպատակն է բժշկական համալսարանն ավարտող շրջանավարտներին ներկայացնել ընտրության լայն հնարավորությունները: Իր խոսքում նա հիշատակեց ականավոր բժիշկների, բժշկապետերի, պրոֆեսորների անուններ՝ ներողամտություն հայցելով, եթե չի ներառել իր բոլոր ուսուցիչներին: Նախարարն ընդգծեց, որ հարազատ ԲՈՒՀ-ում հանդիպմանը խիստ պատասխանատվությամբ է պատրաստվել՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր բժշկի կյանքում մասնագիտության ընտրությունը երկրորդ կարևոր որոշումն է՝ ընտանիք կազմելուց հետո: «Կցանկանայի, որ անկեղծ քննարկում ծավալենք, կիսվենք մեր անհանգստություններով, մտահոգություններով, որոնք սովորաբար ծառանում են մասնագիտական ընտրություն կատարելիս»:

Պրոֆեսոր Մուրադյանը ներկայացրեց բոլոր այն ուղիները, որոնք այսօր բաց են ԵՊԲՀ շրջանավարտների առաջ, անդրադարձավ առողջապա-



հության կազմակերպիչ, բժիշկ-տեսաբան և պրակտիկ բժիշկ դառնալու հնարավորություններին ու հեռանկարներին: Նախարարը ընդգծեց նաև շրջանավարտների՝ ուսումնական ավարտելուց հետո մարզեր ուղեգրվելու և այնտեղ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու լայն հնարավորությունը: «Սարգերում որակյալ մասնագետների, մասնավորապես՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգների մեծ պահանջարկ կա: Պետք է մշտն, որ մարզային ենթակայության շատ հիվանդանոցներ նյութատեխնիկական իրենց հագեցվածությամբ, արդիական սարքավորումներով չեն զիջում Երևանի բժշկական կենտրոններին, և այսօր մարզային իշխանությունների հետ բանակցային աշխատանքներ են տարվում՝ մարզ մեկնելու ցանկություն ունեցող երիտասարդների համար ինչպես ֆինանսական, այնպես էլ բնակարանային ու կենցաղային բավարար պայմաններ ապահովելու ուղղությամբ»:

Նախարարն ավելացրեց նաև, որ մարզերում աշխատող երիտասարդ մասնագետների համար ՀՀ առողջապահության նախարարությունն առաջիկայում արտերկրում մասնագիտական վերապատրաստում անցնելու հնարավորություն կընձեռի: Արմեն Մուրադյանը շրջանավարտներին հորդորեց՝ առաջին հերթին առաջնորդվել մարդկանց անշահախնդիր օգնելու, ապաքինելու մեծ ցանկությամբ: Նա ընդգծեց, որ յուրաքանչյուր մասնագիտություն պետք է ընտրել պատասխանատվության բարձր զգացումով՝ որպես բժիշկ, վիրաբույժ և առողջապա-

հության կազմակերպիչ կայացման գործում առանձնակի կարևորելով իր ուսուցիչների դերը, ովքեր մշտապես սատարել են մասնագիտական առաջին քայլերը կատարելիս, ինչն ուղեկցվեց դահլիճի բուռն ծափահարություններով, որոնք ուղղված էին հանդիպմանը ներկա առողջապահական ոլորտի ավագ սերնդի ներկայացուցիչներին՝ Յուրի Չոհրաբյանին, Հայրապետ Գալստյանին, Ռաֆայել Գրիգորյանին և այլոց, ինչպես նաև ավելի երիտասարդ մասնագետներին, ովքեր իրենց մեծ ներդրումն ունեն ոլորտի զարգացման և կայացման գործում: Նախարարը ներկայացրեց նաև աշխարհում հայտնի թրուենտների (մասնագիտությամբ բժիշկ, բայց՝ մասնագիտությամբ չաշխատող), ովքեր իրենց հաջողությամբ դրսևորել են գրականության, արվեստի, քաղաքականության, երգարվեստի, լրագրության և շատ այլ ոլորտներում: Հանդիպման վերջում Արմեն Մուրադյանը պատասխանեց ինչպես ուսանողներին, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին կրթական, հետբուհական, առողջապահական համակարգերին, բժիշկների իրավունքներին և այլ խնդիրներին: Իր գեկույցը նախարարն ամփոփեց Մարտիրոս Սարյանի «Հայրենիք» նկարով և Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությամբ ավարտվող սլայդով, որը խորհրդանշում էր հայրենիքում ապրելու, աշխատելու, կայանալու և մեր երկրի տարբեր ոլորտները զարգացնելու գաղափարը:

Thinking about Future Specialization

YSMU graduates, lecturers and other leading specialists of healthcare field had a meeting with Armen Mouradyan, the RA Health Minister.

The Minister and guests were welcomed by YSMU Rector Michael Narimanyan. He mentioned to the graduates that it is now the time to decide upon the narrow specialization.

And since there are various medical specializations and narrowing them is not always easy, they have asked Armen Mouradyan, the RA Health Minister, to share with his experience and advise.

Armen Mouradyan, welcoming the participants, as well as his teachers and colleagues, mentioned that the main objective of the meeting is to introduce the opportunities of choice

to graduates. In his speech he recalled well known doctors and professors. The Minister highlighted that he has properly prepared for the meeting taking into account that the narrow specialization has been the second most important decision in a doctor's life after family.

Professor Mouradyan presented all the ways which are open today for YSMU graduates. He also addressed the prospects of becoming a theoretical doctor and a practical doctor.

He specifically mentioned the opportunity of working in RA marzes (regions) after graduation. According to him there is a demand of qualified specialists in marzes, especially anesthesiologists and intensive care specialists.

He also added that the RA Ministry

of Health will soon provide young specialists who work in marzes to pass trainings abroad.

Armen Mouradyan specifically considered the role of his teachers in becoming a doctor, surgeon and healthcare organizer. Among the people present were Yuri Zohrabyan, Hairapet Galstyan, Rafael Grigoryan, those being the senior generation of health field.

The Minister introduced also popular truants (specialized in medicine but not working in the sphere), who are successful in the field of literature, art, politics, journalism, etc.

At the end of the meeting Armen Mouradyan answered questions which were from educational, PhD, healthcare system, medical rights fields.

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Վերջերս ավելի և ավելի հաճախ են խոսում բժշկական սխալների և դրանց պատճառով տեղի ունեցող մահվան դեպքերի մասին: Շատերին հետաքրքրում է մի հարց. ինչու՞ մեղադրվող բժիշկները չեն պատժվում և չեն գրկվում լիցենզիայից: Այս հարցի շուրջ լրագրողների հետ զրույցում իր դիրքորոշումն արտահայտեց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Արմեն Սուրադյանը:

«Բժշկական սխալը իրավական գնահատական է, և միայն իրավապահ մարմինները և դատարանը կարող են որոշել՝ եղե՞լ է բժշկական սխալ, թե՞ ոչ: Մեղադրել և պատվազրկել բժիշկներին, եթե չկա համապատասխան դատավճիռ, անհարիր է և անթույլատրելի, նաև անթույլատրելի է ինքնադատաստանը: Եթե բժիշկը մեղք ունի, թող պատասխան տա իր մեղքի չափով պետության, այլ ոչ թե առանձին անհատների, հիվանդների բարեկամների կամ լրատվական միջոցների առջև»:

Նախարարի կարծիքով՝ ստանդարտացված չափորոշիչների ներդրումը, օբյեկտիվ դաշտի ստեղծումը և իրավունքների ու պարտականությունների հստակեցումը կարող են օգնել՝ լուծելու այս խնդիրը: Այդ ստանդարտների շնորհիվ ավելի հեշտ կլինի հասկանալ՝ եղե՞լ է բժշկական սխալ (այսինքն՝ արե՞լ է բժիշկը ինչ-որ ավելորդ բան, կամ, ընդհակառակը՝ թերացել և չի արել ինչ-որ կարևոր քայլ, որը սահմանված է չափորոշիչներով), թե՞ ոչ:



«Բժշկության մեջ ամբողջ աշխարհում լավ արդյունքի երաշխիքներ չկան. կա պատշաճ իրականացման գործողությունների նկարագիր, որը մենք այսօր փորձում ենք ներդնել, որպեսզի հստակ երևա՝ արդյո՞ք նա պարտավոր էր այս կամ այն գործողությունները անել և ի՞նչ հերթականությամբ, ի՞նչ հետևողականությամբ և ի՞նչ էթիկական պայմաններում», - ասաց Արմեն Սուրադյանը:

Նա նշեց նաև, որ բժիշկների գործողությունները քննելու համար միայն վերջին երեք ամիսների ընթացքում 18 դատաբժշկական հանձնաժողով է ձևավորվել, և վստահեցրեց, որ նման հանձնաժողովները օբյեկտիվ և անաչառ են լինելու:

Ինչ վերաբերում է լիցենզիայից գրկելուն՝ նախարարը նշեց, որ Հայաստանում 2002-ից ֆիզիկական անձիք չեն լիցենզավորվում, և, բնականաբար, բժշկին հնարավոր չէ լիցենզիայից գրկել, քանի որ նա ուղղակի չունի լիցենզիա:

NEWS.am Medicine

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ

Առողջապահության ոլորտում ներդրած նշանակալի ավանդի, մասնագիտական բարձր պատրաստականության, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ձեռք բերած հաջողությունների համար ԵՊԲՀ հետբուհական ուսուցման ուռուցքաբանության ամբիոնի վարիչ, Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Գալստյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի և առողջապահության նախարարության հուշամեդալներով:

Այդ առիթով ՀՀ վարչապետը և առողջապահության նախարարն այցելեցին ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն, հանդիպեցին բուժանձնակազմին:

Կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Յ. Գալստյանը ներկայացրեց բուժհաստատության գործունեությունը, նշելով, որ կենտրոնի բժշկական ծառայություններից օգտվում է տարեկան մոտ 4500 մարդ, կատարվում է շուրջ 3500 վիրահատություն, բացի այդ՝ կենտրոնը կրթական բազա է հանրապետության մասնագետների վերապատրաստման և ԵՊԲՀ-ի ուսանողների գործնական պարաստումների համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության և անձամբ իր անունից ջերմորեն շնորհավորելով Հայրապետ Գալստյանին ծննդյան 75-ամյակի կապակցությամբ՝ վարչապետը ընդգծեց, որ անվանի գիտնականի անխոնջ աշխատանքի շնորհիվ նոր մակարդակ է ապահովվել ուռուցքաբանության բնագավառում առկա գիտական ձեռքբերումները գործնական բժշկության մեջ կիրառելու գործում՝ հավելելով. «Ձեր գիտական նվաճումները ճանաչվել են շատ երկրներում: Լինելով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, մի շարք երկրների գիտությունների ակադեմիաների պատվավոր անդամ, գիտություններ

րի ակադեմիաների միջազգային միության իսկական անդամ՝ Դուք բազմաթիվ պարգևների ու կոչումների եք արժանացել: Դրանցից յուրաքանչյուրը գուցե շատերի համար ողջ կյանքում հպարտանալու առիթ կդառնար, սակայն ոչ Ձեզ համար: Վստահ եմ, որ Հայրապետ Գալստյան բժիշկ-գիտնականի համար առավել կարևոր է տասնյակ հազարավոր քաղաքացիների կյանքը: Հարգարժան պրոֆեսոր, Դուք մարդկային այն տեսակին եք պատկանում, որ ինչ ոլորտում էլ լինեիք, նույն պատասխանատվությամբ ու անձնացորդ նվիրումով էիք կատարելու Ձեր աշխատանքը: Որքան մեծ



է նման մարդկանց շրջանակը՝ այնքան հզոր է մեր հայրենիքը»:

Հոբելյանի առթիվ ՀՀ առողջապահության նախարար Արմեն Սուրադյանը նշեց. «Սիրելի ուսուցիչ, ինձ համար մեծ պատիվ է հարազատ օջախում, ուր աշխատել և սովորել եմ Ձեզանից, այսօր շնորհավորանքի խոսք հղել: Ձեր բազմամյա գործունեությունը մեծ նպաստ է բերել Հայաստանում ուռուցքաբանության զարգացմանը: Տասնյակ հազարավոր փրկված, առողջացած մարդիկ երախտիքով են նշում Ձեր պայծառ անունը:

Դուք առաջիններից մեկն եք, որ ԽՍՀՄ-ում մշակեցիք և ներդրեցիք չարորակ նորագոյացությունների մեծ ֆրակցիաներով ճառագայթային բուժումը, վերջնադու քաղցկեղի դեպքում էնդոլիմֆատիկ ինֆուզիոն քիմիաթերապիան, կրծքային ավշային ծորանի դրենավորումը և այլն:



Վերջին տարիների գիտական Ձեր հետազոտությունները նվիրված են հիվանդների ճառագայթային բուժման արդյունքների բարելավմանը: Ձեր գրչի տակից դուրս եկած 6 մենագրությունները և 420 գիտական հոդվածներն ու թեզերը շատերի համար ուսումնական ձեռնարկ են և ծանոթացում են այն գաղտնիքներին, որոնք պետք է հետազայում կիրառվեն աշխատանքում:

20 տարի ղեկավարելով ԵՊԲՀ ուռուցքաբանության ամբիոնը, իսկ վերջին 12 տարին՝ նաև ՀՀ ԱՆ Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնը՝ Դուք ուռուցքաբանների մի ամբողջ սերունդ եք կրթել: Ձեր շատ

սաներ այսօր բժշկական կազմակերպություններ են ղեկավարում ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իսրայելում, Ռուսաստանի Դաշնությունում և այլուր:

Սիրելի ուսուցիչ, այստեղ նստած բազմաթիվ բժիշկներ իրենց համարում են Ձեր աշակերտները, և ես ինքս էլ ինձ դասում եմ նրանց շարքին»:

Բարձր գնահատանքի համար շնորհակալություն հայտնելով կառավարության ղեկավարին և առողջապահության նախարարին՝ պրոֆեսոր Յ. Գալստյանը նշեց, որ վարչապետի պարգևը կենտրոնի ողջ անձնակազմի աշխատանքի գնահատականն է՝ վստահեցնելով, որ կենտրոնը հետայսու ևս իր առավելագույն ջանքերը կներդնի հասարակությանը բարձրորակ ծառայություններ մատուցելու գործում:

Սղբյուրը՝ <http://moh.am/>

ՄԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՌՋԵՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏՔՆ ԵՆՔ ՓԱԿՈՒՄ...

ԲՅՈՒԶԱՆԴ ՔԱՅԿԵԶՅԱՆ

Սիրիայում առկա վիճակը ստիպեց ոչ միայն սիրիացիներին, այլև սիրիահայերից շատերին թողնել այդ երկիրը: Սիրիահայ բժիշկներից շատերը նախընտրեցին իրենց հայրենիքը: Հայաստան գալով՝ նրանք հիմնականում աշխատանքի անցան մարզային հիվանդանոցներում և կենտրոններում և իրենց անձնվեր ու հոգատար աշխատանքի շնորհիվ անմիջապես արժանացան հիվանդների և հիվանդատերերի ջերմ վերաբերմունքին և բարձր գնահատականին: Արժե նշել, որ սիրիահայ բժիշկները հիմնականում եՊԲՀ շրջանավարտներ են, և իրենց լավ աշխատանքը, հայազգի հիվանդի նկատմամբ ընդգծված հոգատար վերաբերմունքը համարում են պատասխանը այն աշխատանքի, որը ուսումնառության տարիներին իրենց վրա ծախսել է համալսարանը:

Ծաղկահովիտի բժշկական կենտրոնի վիրաբույժ Բյուզանդ Քահկեջյանը նշում է, որ այսօր իրենք հայրենիքի առջև ունեցած պարտքն են փակում, քանի որ տարիներ առաջ, սովորելով հայրենիքում, միայն ջերմություն և զորովանք են ստացել: Սիրիահայ բժիշկներից յուրաքանչյուրը անմնացորդ նվիրումով է իրականացնում մարզաբնակ հիվանդների բուժումը: Թերևս նրանցից յուրաքանչյուրի մասին կարելի կլինե՞ր առանձին հոդված տպագրել՝ հիմք ընդունելով նրանց ուղղված շնորհակալական նամակները:

Մասնագիտական տոնի առիթով սիրիահայ բժիշկներից շատերին հանդիպեցին, նրանցից ոմանց պատվոգրերի արժանացրին ՀՀ առողջապահության և սփյուռքի նախարարները՝ հավաստիացնելով, որ անհրաժեշտ ջանքեր կգործադրեն մարզերում աշխատող բժիշկների կենցաղային հոգսերը թեթևացնելու նպատակով:

Թալինի բժշկական կենտրոնի սիրիահայ սրտաբան Պողոս Աղոյանի վերջերս կատարած անձն-

վեր աշխատանքի ու մասնագիտական հմտության շնորհիվ փրկվեց հիվանդներից մեկի կյանքը: Բարձրաձայնելով այդ մասին՝ վերջինիս հարազատներն ընդգծում էին, թե ինչպիսի հոգատարությամբ էր նա վերաբերվում հիվանդին:

Սպիտակի բժշկական կենտրոնում արդեն երկու տարի որպես մանկաբույժ աշխատող սիրիահայ վարանդ Կիրակոսյանի հոգատար աշխատանքին ՀՀ առողջապահության նախարար Ա. Սուրադյանը ծանոթացել էր Լոռու մարզ կատարած այցի ընթացքում, ով միևնույն ժամանակ ականատես էր եղել, թե ալավերոցիներն ինչպիսի երախտագիտությամբ են խոսում սիրիահայ մեկ այլ մանկաբույժի՝ Գրիգոր Ալոյանի բարձր պրոֆեսիոնալիզմի ու անձնվեր գործունեության մասին: Նրանց հետ ՀՀ առողջապահության նախարարությունում հյուրընկալվել էին նաև Ստեփանավանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի վարիչ Ավետիս Մալաքյանը, Ծաղկահովիտի բժշկական կենտրոնի վիրաբույժ Բյուզանդ Քահկեջյանը, «Նաիրի» բժշկական կենտրոնի սրտաբան, ՀՀ առողջապահության նախարարին կից կոլեգիայի անդամ ճորճ Բարսեղյանը: Բարձր պրոֆեսիոնալիզմ դրսևորելու և սահմանային վիճակում գտնվող հիվանդի կյանքը փրկելու համար հանդիպման ընթացքում Պողոս Աղոյանը արժանացավ պատվոգրի:

Պատվոգրերի արժանացան նաև սիրիահայ մյուս բժիշկները: Ի դեպ՝ Գրիգոր Ալոյանը ներկա չէր պարզևատրմանը, քանի որ նախարարության ֆինանսավորմամբ մասնագիտական վերապատրաստում է անցնում Մոսկվայում:

«Ես շատ ուրախ եմ, որ դուք ձեր գիտելիքներով, փորձով, ձեր անցած մեծ ճանապարհով ու հայրենասիրությամբ և անգամ ձեր ներկայությամբ զարդարում եք մարզային մեր բուժհաստատությունները և ձեր նվիրումով ոգևորում տեղացի բժիշկներին: Շնորհավորում եմ բոլորիդ: Ցանկանում եմ, որ ձեր հայրենասիրությունն՝ իր ամենաբարձր

դրսևորմամբ, վարակիչ լինի մյուսների համար: Ես ականատես եմ եղել հեղինակավոր երկու մասնագետի հայրենասիրության մասին զրույցին: Նրանցից մեկն ասաց՝ հայրենասիրությունն այն է, երբ քո հնարավորություններով կարող ես քաղաքակիրթ ցանկացած երկրում ամենալավ պայմաններով աշխատել, բայց նախընտրում ես քո երկիրը», - ասաց Արմեն Մուրադյանը:

Իր երախտագիտությունը հայտնելով՝ ճորճ Բարսեղյանը նշեց. «Սփյուռքում ապրելով և միշտ կարոտելով հայրենիքը՝ ավելի զգացմունքային ենք դարձել: Կենցաղային հոգսեր, անշուշտ, ունենք, սակայն դրանք աժանցվում են: Երևի իմ գործընկերները նույնպես այլ լեզուներով շատ վկայագրեր են ստացել, սակայն այս մեքոպատառ պարզև ընդունում են որպես մասունք»:

Սիրիահայ բժիշկների հետ հանդիպման ընթացքում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց. «Բժիշկ լինելը արդեն իսկ մեծագույն պարզև ու շնորհ է: Իսկ հայ բժիշկ լինելը՝ առավել ևս: Ձեր ուժը, կազմակերպվածությունը, ձեր տաղանդը ի հայտ եկավ 1988-ի երկրաշարժի ժամանակ: Ձեր հաջորդ մասնագիտական փայլուն դրսևորումը ընդգծվեց դարաբաղյան գոյապայքարի տարիներին: Վերջին խաղաղ տարիներին մեր հայ բժիշկները առանձին ուղղություններ, դպրոցներ են ստեղծում, որոնք մրցունակ են դառնում աշխարհի շատ երկրների հետ: Ցանկանում եմ առանձնացնել սիրիահայ մեր հայրենակիցներին: Չկա որևէ սիրիահայ, որ մեծ կորուստներ կրած չլինի: Նրանք իրենց ծննդավայրում կայացած, հզոր անհատներ էին: Հատկապես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել սիրիահայ մեր այն բժիշկներին, ովքեր մեկնեցին մարզերում աշխատելու: Հիմնականում Դամասկոսից և Հալեպից եկած, քաղաքային կյանքին ու պայմաններին վարժված՝ դուք այսօր բժշկական օգնություն եք ցուցաբերում մարզային բուժօժանդակներում»:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ՝ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻՆ



ուսանողների՝ Աիդա Դանիելյանին, Օֆելյա Սամվելյանին, Սարգիս Մխիթարյանին, Անուշ Բուդումյանին, Անի Փիլիպոսյանին, Մերի Մխիթարյանին և Գարեգին Արաջյանին:

Ուսանողներն, իրենց հերթին, շնորհակալագիր հանձնեցին ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ամբիոնի վարիչ Կարինե Սալայանին, ով մեծ ուրախությամբ աջակցել էր դասընթացների անցկացմանը: Հանդիպման պաշտոնական մասի ավարտից հետո ռեկտորը զրուցեց ուսանողների հետ, հետաքրքրվեց, թե ինչ խնդիրներ և առաջարկություններ ունեն, խոստացավ աջակցել և ընդառաջել նրանց նմանատիպ յուրաքանչյուր նախաձեռնության:

Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ ուսանողներն առաջարկեցին, որպեսզի ամիսը մեկ-երկու անգամ ռեկտորի և ԵՊԲՀ առաջատար մասնագետների կողմից իրենց համար անցկացվեն վարպետության դասեր, ինչին Միքայել Նարիմանյանը համաձայնեց մեծ ուրախությամբ:

Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողական խորհրդարանի միջազգային կապերի հանձնաժողովի նախաձեռնությամբ անցյալ ուսումնական տարվա առաջին կուրսի 220 ուսանողների համար կազմակերպվել էին առաջին բուժօգնության դասընթացներ: Ինչպես նշում են կազմակերպիչները՝ ուսանողները մեծ ոգևորությամբ են մասնակցել

դասընթացներին և վերջում ստացել են հավաստագրեր: Դասընթացների կազմակերպիչներին ընդունել է ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարիմանյանը: Հավանության արժանացնելով նմանատիպ միջոցառումների հաճախակի անցկացումն առաջին կուրսեցիների շրջանում՝ ռեկտորը շնորհակալագրեր հանձնեց դասընթացների կազմակերպիչներին՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետի 7

Students Awarded by the Rector

Recently first aid courses were organized for 220 students of 1st year. The course was initiated by the International Relations Committee of the YSMU Student Parliament.

As was noted by the organizers the students have been taking part in the lectures with great enthusiasm and have received certificates.

The course organizers were received by the YSMU Rector Michael Narimanyan. He welcomed the frequent conduct of such events among the students of first year. He awarded the organizers with certificate of appreciation, specifically to 7 students: Aida Danielyan, Ofelya Samvelyan, Sargis Mkhitaryan, Anush Budumyan, Ani Piliposyan, Meri Mkhitaryan and Garegin Aradjyan. The students in their return awarded Karine Malayan, the YSMU General Medicine Department, with certificate of appreciation, as she had her share in supporting the organization of the lectures.

After the end of the official part of the meeting the Rector talked to the students, got to know about their issues and proposals, promised to support and promote



any such kind of initiative.

The students proposed master classes to be organized once or twice a month by the Rector and YSMU leading specialists. The proposal was welcomed with great enthusiasm by Michael Narimanyan.

«ՄԵԴՊՐԱԿՏԻԿԻ» ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԵՊԲՀ ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Մ. ՆԱՐԻՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ

- Նախորդ անգամ մեր հանդիպման առիթը պացիենտի համաշխարհային օրն էր, հետաքրքիր հերթազայությամբ՝ այս անգամ մեր թեման նվիրված է բուժաշխատողի օրվան: Բժիշկ դառնալը սկսվում է կրթությունից, և դուք այն մարդկանցից եք, ով կարող է խոսել այդ մասին...

- Բժշկական կրթությունը առանձնահատուկ երևույթ է, որը պահանջում է նվազագույնը երեք մարդու մասնակցություն՝ դասախոս, պացիենտ և ուսանող: Այս երեքը պարտադիր են: Բացի այս ավանդական մոտեցումից՝ գոյություն ունի նաև նորը, որն արդեն ներդրում ենք մեր ուսումնական գործընթացում. դա սինուլյացիոն մեթոդով դասավանդումն է, երբ «ծնացվում» է հիվանդություն: Դա այն երևույթն է, երբ դասավանդվում է մուլ-յաժմերի, մանեքենների վրա: Չէ՞ որ հնարավոր չէ անվերջ սպասել, թե երբ կլինի համապատասխան դեպքը: Մուլյաժի վրա ձեռք է բերվում համապատասխան հնտությունը. մասնագետը մարզվում է: Սա նոր խոսք է մեր բարձրագույն կրթության մեջ: Սինուլյատոր կենտրոնն այս պահին գտնվում է շինարարության փուլում, շուտով կստանանք սարքավորումներ, և նոյնմեթոդից այն կսկսի գործել: Կենտրոնը հետաքրքրական կլինի ոչ միայն ուսանողների, այլև վերապատրաստվող, վերամասնագիտացող բժիշկների համար:

- Ի՞նչ հատկանիշներ են միավորում ձեր ճանաչած լավագույն բժիշկներին, կա՞ն ընդհանրական հատկանիշներ:

- Այո, անպայման: Առաջին հերթին՝ պրոֆեսիոնալիզմը: Պրոֆեսիոնալիզմն ասելով՝ ես հասկանում եմ մի շատ կարևոր հատկանիշ. անկախ նրանից, թե ի՞նչ է կատարվում մարդու հոգում, ի՞նչ է կատարվել իր հետ նախորդ օրը կամ նախորդ գիշերը՝ անցնելով իր պարտականություններին՝ նա չպետք է փոխանցի դա գործին, պետք է կատարի իր աշխատանքը: Ահա՛ ով է իր գործում պրոֆեսիոնալը: Ամփոփեմ. հոգով պրոֆեսիոնալն ամեն ինչում է պրոֆեսիոնալ: Եվ երկրորդ՝ պետք է վստահություն ձեռք բերես և փոխանցես պացիենտին: Նա պետք է վստահ լինի, որ դու հասկացար իր խնդիրը և այն կարող ես լուծել և արդեն իսկ լուծում

ես: Նա կմիանա քեզ, և հիվանդության դեմ պայքարում դուք արդեն միասին կլինեք:

- Փաստորեն բժշկվելու ընթացքը պացիենտին չպետք է անհասկանալի լինի՝ ինչպես բժշկի ձեռագիրը...

- Նա պետք է հասկանա այն չափով, որքանով դա կօգնի իրեն՝ հաղթահարելու իր խնդիրը, իսկ այդ չափը որոշում է պրոֆեսիոնալը: Բժիշկը պետք է պացիենտին կարողանա դարձնել իր գործընկերը հիվանդության դեմ պայքարում:

- Բժշկությունն այն քիչ մասնագիտություններից է, որոնց կրողները երդում են տալիս... Դուք ինչպե՞ս եք նայում այդ խորհրդանիշին, կփոխե՞ք որևէ բան Հիպոկրատի երդման մեջ:

- Մենք հիմա պատրաստվում ենք մեր ավարտական երեկոյին, և պետք է ասեն, որ երդման մեջ ավելացումներ անելու միտքը, զայթակղությունը իմ մեջ կա, սակայն, մյուս կողմից, մտածում եմ՝ զուցե շատ ինքնավստահ քայլ լինի... Քանի որ դուք եք հարցնում, ես կարող եմ օգտագործել այս առիթը և հայտարարել՝ այն, ինչ հնչում է Հիպոկրատի երդման մեջ, ինչ հնչում էր խորհրդային Միության բժշկի երդման մեջ, և ինչ այսօր հնչում է հայ բժշկի երդման մեջ, իրականում դարերից եկած, դարերի ընթացքում մեր մասնագիտությունը բնորոշող պարտադիր պահեր են... Վերաբերմունքը դեպի պացիենտը, դեպի գործընկերը. այնտեղ ամեն ինչ գրված է... Բայց կա մի բաց, որը կարելի է լրացնել. ինչպես ես վերաբերվում ինքը քեզ... Ես այստեղ կավելացնեմ. «Երդվում եմ ողջ կյանքում շարունակել ուսումս»:

- Շատ արդիական հավելում կլինի՝ հատկապես շարունակական կրթության համատեքստում:

- Այո, ինչպես տեսնում եք, շատ են կարևորում պրոֆեսիոնալիզմը: Բժիշկը պետք է լինի շարունակական պրոֆեսիոնալ՝ կատարելագործման գործընթացում:

- Բժիշկները հիմնականում նշում են, որ իրենք բժիշկ են ամեն ժամ: Այստեղ առաջանում է ընտանեկան, անձնական կյանքի հետ բախման խնդիր: Ինչպե՞ս եք տեսնում լուծումը:

- Այո, բժիշկն աշխատում է օրական 24 ժամ, շաբաթը՝ 7 օր: Իմ կինը ման-

կաբարձ-գինեկոլոգ է, և մեզանից յուրաքանչյուրը շատ լավ հասկանում է իր առջև դրված բժշկական խնդիրները: Երբեմն երեկոները քննարկում ենք ինչ-որ դեպքեր, խնդիրներ՝ կապված մեր մասնագիտական գործունեության հետ: Լավ է, երբ կողակիցը նույնպես բժիշկ է. սա կարող էք ընդունել նաև որպես խորհուրդ: Բայց, ինչպես ասում են՝ սերը մեզանից ուժեղ է: Ում սիրես, նրա հետ էլ պետք է կարողանաս կապել կյանքդ: Սերն է կարևորը...

- Բժիշկ լինելու գլխավոր բարդությունները...

- Բժիշկների շրջանում բավական տարածված է քրոնիկ հոգնածության համախտանիշը, և դա ունի լուրջ պատճառներ: Կան բաներ, որոնք շատ դժվար է հաղթահարել՝ ուրիշի ցավը, պացիենտի մահը, քրոնիկական հիվանդին բուժելու դժվարությունը, հիվանդ երեխան... Երբեք այս ամենին սովորել հնարավոր չէ. ես դրան չեմ հավատում... Յուրաքանչյուր սխալը, յուրաքանչյուր կասկածը անդադար կապված են ներքին ապրումների հետ: Բժշկի առողջությունը միշտ մեծ ռիսկի է ենթարկված: Դրա համար ես իմ գործունեության ամենակարևոր ուղղություններից մեկը տեսնում եմ բժիշկների առողջության պահպանման համակարգ ստեղծելը. ֆիզիկական վարժություններ, ճիշտ սնունդ, ռեժիմ, հոգեհուզական լիցքաթափման տարբեր միջոցներ:

- Ամենաապավորիչ «բուժաշխատողի օրը» ձեր կյանքում:

- Հենց սա ... Անկեղծ եմ ասում: Ինձ երբեք նախկինում բախտ չէր վիճակվել այս թեմայով հարցազրույց տալ:

- Ես սպառնեցի իմ հարցերը: Ի՞նչ կցանկանայիք ավելացնել:

- Տարբեր հավաքությունների ժամանակ առողջության համար կենաց բարձրացնելիս՝ ես միշտ կրկնում եմ նույն բանը. մեծամասնության համար առողջության մաղթանքները պարզապես խոսքեր են, երազանքներ, բարի հույզեր, իսկ մեզ համար դա աշխատանք է:

23 հունիս, 2014թ.
Աղբյուրը՝ med-practic.am

ՄԵՐ ՀՅՈՒՐՆ Է ԵՊԲՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՍԵՅՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆԸ



- Գիտական խորհրդի նիստերից մեկում համալսարանի գիտական գործունեության վերաբերյալ հաշվետվության մասին իր խոսքում ԵՊԲՀ ղեկավար Ս. Նարինյանյանը գիտական հետազոտությունների առաջնահերթ խթան համարեց տարեկան հաշվետու գիտաժողովների կազմակերպման ավանդույթի վերականգնումը և գիտակոորդինացիոն խորհրդի ու փորձագիտական հանձնաժողովների դերի բարձրացումը: Ասացեք, խնդրեմ, ո՞րն է ձեր վարչության դիրքորոշումն այս ուղղությամբ:

- Մեր համալսարանում գիտությանը խթանող հիմնական գործոնները, գիտական և գիտատեխնիկական գործունեության առանցքային բոլոր հարցերը կանոնակարգվում և դրանց վերաբերյալ որոշումներ են կայացվում փորձագիտական հանձնաժողովներում քննարկվելու և գիտակոորդինացիոն խորհրդում հաստատվելու արդյունքում: Օրակարգում մշտական տեղ են զբաղեցնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիրը, գիտական թեմաների և ատենախոսությունների ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունները:

ԳԿԽ-ում առողջ քննադատությունը դարձել է աշխատելաճ: Փորձագիտական հանձնաժողովների նախագահների տարեկան հաշվետվությունները բարենպաստ միջավայր են ստեղծում թե՛ գիտական գործունեության համակարգման ոլորտում, թե՛ գիտական թեմաների առաջնայնության որոշման և հետազոտություններին աջակցության ցուցաբերման գործում: Հարկ են համարում նշել 2013-ի մեր կարևոր ձեռքբերումներից ևս մեկի մասին. ԵՊԲՀ գիտակոորդինացիոն խորհրդի կազմում մշտապես գործող փորձագիտական հանձնաժողովների կազմը համալրվեց «Հոգեբուժություն և բժշկական հոգեբանություն» փոր-

ձագիտական հանձնաժողովով, որը նպաստեց մեր համալսարանում գործող գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդին նշված դասիչով ատենախոսությունների պաշտպանություններ իրականացնելուն:

- Ի՞նչ կասեք համալսարանում կազմակերպվող գիտաժողովների մասին:

- Նախորդ տարիներին կազմակերպվել են 2 հաշվետու գիտաժողովներ, որոնց հաջորդել է գիտական աշխատանքների ժողովածուների տպագրություն: 2013-ին լույս տեսած ժողովածուն երկհատորյակ է և պարունակում է 140 հոդված: Այն իր ծավալով կրկնակի գերազանցում է 2012-ին տպագրված ժողովածուին: Իսկ այս տարի պլանավորված հաշվետու գիտաժողովը էապես տարբերվում է նախորդներից: Այն հանդես է գալու յուրօրինակ ձևով. կլինիկական գործունեությամբ զբաղվող մեր գործընկերները կներկայանան գիտաժողովի՝ համալսարանական կլինիկական հիվանդանոցի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում, հանրային առողջության ոլորտի մասնագետները կգումարեն գիտաժողով՝ նվիրված Կարո Միրանի Դեղծունյանի ծննդյան 90-ամյակին, իսկ տեսական բժշկության ոլորտի մեր գործընկերները՝ փորձարարական բժշկագիտության մասնագետները, կհամախմբվեն գիտաժողովի գիտահետազոտական կենտրոնի շուրջ, որն այս տարի նշում է իր կազմավորման 50 ամյակը:

Բոլոր գիտաժողովների համար մենք շահել ենք գիտական միջոցառման կազմակերպման պետական դրամաշնորհ:

Մեր վարչությունը նաև աջակցում և մասնակցում է համալսարանում կազմակերպվող տարբեր գիտաժողովների կազմակերպման ու կայացման աշխատանքներին: Մինչ օրս

անցկացված գիտական միջոցառումներից կարելի է հատկապես առանձնացնել աշխարհահռչակ գիտնական, բջջաբան Գեորգիոս Պապանիկյալուին նվիրված գիտաժողովը, «Հազվադեպ հիվանդությունները Հայաստանում» խորագրով գիտաժողովը, քնի համաշխարհային օրվան նվիրված շնորհանդես քննարկումը, ստոմատոլոգների հայկրացական բինացիոնալ առաջին վեհաժողովը, թայվանահայկական առաջին բժշկական գիտաժողովը՝ թայվանահայկական առաջին բիզնես ֆորումի հետ համատեղ, հայռուսական համատեղ գիտաժողովը, դատաբժշկական փորձաքննության և բժշկական իրավունքի արդի խնդիրներին նվիրված գիտաժողովը, III ռուս-հայկական գիտագործնական գիտաժողովը, «Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները», «Ճառագայթային ախտորոշման արդի խնդիրները՝ գիտությունից դեպի պրակտիկա», «Շնչառական բժշկության դասերը» վերնագրերով գիտաժողովները, բժշկական տուրիզմի սեմինարը, «Կաթվածի բուժումը 2013» միջազգային գիտաժողովը, «Մեծահասակների վիրաբուժություն» միջազգային կոնգրեսը, «Սեռական խանգարումների ախտորոշման և բուժման ժամանակակից մոտեցումները» գիտաժողովը և շատ այլ միջոցառումներ:

- Ի՞նչ տեղաշարժեր կան գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ:

- Ինչպես վերոնշյալ նիստի ընթացքում իր ելույթում հայտնեց ղեկավար Ս.Ջ. Նարինյանյանը, հետազոտողի կրեդիտային համակարգի ներդրմամբ գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության աշխատանքային ծանրաբեռնվածությունը կրկնապատկվել է:

Վարչության աշխատանքն իր հագեցվածությամբ նմանվել է դեկանատի կողմից իրականացվող գործունեությանը:

Մեր կողմից կազմակերպվում են տարեկան 2 կիսամյակային դասընթացներ և, համապատասխանաբար, 2 քննաշրջան: Հետազոտողի կրեդիտային համակարգով իրականացվող ծրագիրը բաղկացած է երկու փոխկապակցված կառուցամասերից՝ կրթական և հետազոտական: Հետազոտողի եռամյա ծրագրի լրիվ բեռնվածությունը համարված է 180 կրեդիտային միավորի, որից 20-30%-ը կազմում է կրթական, 70-80%-ը՝ հետազոտական բաղկացուցիչները: Դրանով պայմանավորված՝ գիտական մասի կողմից կազմվել է աշնանային և գարնանային քննաշրջաններին համապատասխան դաստախտակ, որը, ինչպես գիտք, ներառում է մասնագիտական և ընդհանուր կրթական բաղկացուցիչներ: Այս առարկաների ուսուցումը կազմակերպվում է մեր վարչության տարածքում կահավորված և տեխնիկապես հագեցված վեբինարի լսարանում:

- Ի՞նչ ասել է՝ վեբինարի լսարան:

Վեբինարի լսարանում հետազոտողների համար արդեն հասանելի են Web of Knowledge համակարգի մի շարք էլեկտրոնային ռեսուրսներ, ինչը հնարավոր դարձավ ԵՊԲՀ-ի ASNET գիտատեղեկատվական կոնսորցիումին անդամագրվելու արդյունքում և, իհարկե, ԳՊԿ աջակցությամբ:

Web of Knowledge-ի ռեսուրսները հնարավորություն են տալիս արագորեն գտնելու և վերլուծելու բազմապիսի տեղեկատվություն: Համակարգն ընդգրկում է մատենագիտական ամբողջական նկարագրություն աշխարհի առաջատար գիտական գրականության մեջ գոյություն ունեցող տարատեսակ հրատարակումների մասին: Այս համակարգի միջոցով կարելի է նաև որոնում իրականացնել աշխարհի հղումների առաջատար շտեմարաններում՝ օգտագործելով մեջբերվող հղումների որոնման և վերլուծման հզոր գործիքները՝ բոլորը մի պլատֆորմում: Մեր լսարանում կարելի է օգտվել նաև ռուսալեզու "Консультант студента" առցանց գրադարանի ռեսուրսներից: Հասանելի են բժշկական մասնագիտական գրականու-

թյուն՝ գրքեր, ձեռնարկներ, ատլասներ, մասնագիտական տեսանյութեր և անընդհատ թարմացվող տեղեկություններ:

- Ի՞նչ կասեք գիտական ներուժի, ասպիրանտուրայի և ատենախոսությունների մասին:

Այս պահին մեր համալսարանում դոկտորի գիտական աստիճան ունեն 179 աշխատակիցներ, իսկ թեկնածուի՝ 471-ը: Գիտական կարգերի պատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքները գտնվում են համալսարանի գիտական հանրության ուշադրության կենտրոնում, քանի որ հետազոտողները մեր հիմնական ներուժն են և հետագայում համալրելու են մեր գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Այս տարի մեր համալսարանի ասպիրանտները թվով 43-ն են, իսկ դոկտորանտները՝ 4-ը: ԵՊԲՀ հայցորդները 140-ն են, որոնցից 28-ը՝ դոկտորական, իսկ 112-ը՝ թեկնածուական: Այլ հաստատություններից կա 21 հայցորդ՝ 2 դոկտորական, 19 թեկնածուական:

- Որքանով են մեր համալսարանում ուսանողները ինտեգրված հետազոտական գործունեությանը:

Ցանկանում են նշել այդ կարևոր գործոնի մասին. այժմ, առավել քան երբևէ, առկա է գիտական և ուսումնական մասերի սերտ համագործակցությունը, որին, իմ կարծիքով, մեծապես նպաստեց մեր համալսարանի միջազգային ակրեդիտացիային միանալու գործընթացը: Հոկտեմբերին կայանալիք ուսումնամեթոդական գիտաժողովը ևս կազմակերպվում է համատեղ ջանքերով: Նույն միջավայրում են լուծվում նաև ուսանողների կողմից հետազոտական ակտիվություն ցուցաբերելու, հետազոտողի մտածելակերպ ձևավորելու գործընթացները: Վերջին գիտաժողովի արդյունքում ձևավորվեց հետևյալ միտքը՝ «Հետազոտողի մտածելակերպը՝ որպես գիտության երիտասարդացման գրավական», որը գիտակրողինացիոն խորհրդի կողմից հաստատվեց՝ որպես ԵՊԲՀ երիտասարդ գիտնականների համար գերակա հետազոտական ուղղություն և ընդգրկվեց բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրում:

- Երբ մեր համալսարանում հյուրընկալվում էր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագա-

հը, իր խոսքում նա նշեց, որ Հայաստանի ԲՈՒՀ-երի ցանկում ԵՊԲՀ-ն զբաղեցնում է 3-րդ պատվավոր հորիզոնականը՝ պետության կողմից շահած գիտական դրամաշնորհների թվաքանակով՝ Ձիջելով միայն մայր բուհին և ճարտարագիտական համալսարանին: Ի՞նչ կասեք գիտական գործունեության ֆինանսավորման մասին:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն՝ գիտական հիմնարկների գիտահետազոտական գործունեության ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից իրականացվում է հիմնականում գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման բազային ֆինանսավորման ձևով: Այս ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է տարեկան կատարված աշխատանքների և հաջորդ տարվա հայտերի փորձաքննության արդյունքների հիման վրա: Հարկ են համարում նշել, որ ինչպես ցանկացած ծրագիր, որի ֆինանսական աղբյուրը հանդիսանում է ՀՀ պետբյուջեն, այս ծրագրի բյուջեն ևս ունի տարեկան մոտ 10% աճի միտում: Այժմ հաստատված 107 հաստիքների շրջանակներում գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված են ԳՀԿ և շուրջ 4 տասնյակ ամբիոնների 152 աշխատակիցներ, որոնց 34%-ը երիտասարդ գիտնականներ են: Ծրագրի շրջանակներում իրականացվում են մի շարք ատենախոսական աշխատանքներ: Գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ (պայմանագրային) ֆինանսավորման ծրագրի վերջին մրցույթներում հաղթել են 12 նախագծեր, որոնցից 9-ը գիտական թեմաների հայտերի ընտրության, 2-ը՝ երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների և 1-ը՝ ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրերի մրցույթներում:

Համալսարանի ևս 4 աշխատակիցներ շահել են «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթում:

Ունենք նաև մեկ դրամաշնորհի հայբելառուսական միջպետական ծրագրով՝ գիտահետազոտական կենտրոնի կողմից:

-Շնորհակալություն հարցազրույցի համար:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՄԻՐՂՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ (1420-1496 թթ.)



*Նախորդ տարիներին առաջին կուրսեցու համար իմաստ-
նության դասը վարել են Հիպոկրատը, Մխիթար Չերացին: Այս
համարում ձեզ ենք ներկայացնում Ամիրղովլաթ Ամասիացուն:*

Նախքան միջնադարը՝ հայ բժիշկների և բժշկական գրքերի
մասին գրավոր տվյալներ չկան: Սակայն դա չի նշանակում,
որ դրանից առաջ Հայաստանի քաղաքներում բնակվող կամ
շրջիկ բժիշկներ չեն եղել: Նրանք գոյություն են ունեցել բո-
վանդակ երկրում և զբաղվել են հիվանդների առողջությունը
վերականգնելու գործով: Վստահաբար նրանք ունեցել են
նաև իրենց բուժարան գրքույկները, որոնք, ցավոք, մեզ չեն
հասել:

*Այն էլ իմացիր, եղբայր, որ այս գիրքն իմ խոսքը չէ,
այլ հին իմաստունների և իմաստուն բժիշկների և վերջին
փիլիսոփաների: Բոլոր բժիշկների խոսքն է՝ այն է Հիպոկ-
րատեսի և Գաղիանոսի, Արժիճանեսի և Ֆլուսի, Ռուֆոսի
և Դեճանիսի, Մասրճուկի և Չեսուկի, Մասուվայի որդու և
Ապուճարեհի, Մասեհի և Ջաքարիայի որդու, Սապիթ Կու-
ռայի և Չունանի, Սինայի որդու և Դիատողի, Եհաննայի և
Հատ ուրիշների, որ այս գիտության ասպարեզում շատ են
աշխատել: Ես սրանց գրքերից եմ քաղել և գրել՝ մեծ աշ-
խատանք թափելով իմ սեփական ձեռքով:*

*...Շատ դժվարություններ ու փորձանքներ եմ քաշել
անօրենների ու օտարազգիների, դատավորների, թագա-
վորների և իշխանների երեսից: Երկար տարիներ պան-
դուխտ եմ եղել. տեսել եմ ժամանակի չարն ու բարին,
փորձանքների եմ հանդիպել, հարստություն ու աղքա-
տություն եմ քաշել, թափառել եմ երկրից երկիր և իմ
բժշկությունն եմ արել, շատ դեղ ու ճար եմ փորձել ըստ
իմ իմացածի, ծառայել եմ հիվանդներին՝ մեծամեծերին
ու իշխաններին, հազարապետերին ու հարյուրապետե-
րին, քաղաքացիներին ու աղքատներին, ծերերին ու մա-
նուկներին:*

*...Բժիշկը պետք է օժտված լինի բանականությամբ և
պարտքի գիտակցությամբ: Ոչ մի դեպքում նա չպետք է
լինի գինեմուլ, ազահ և շահախնդիր: Նա պարտավոր է սի-
րել աղքատներին, լինել գթառատ, նվիրված, աստվածա-
վախ, բարոյապես մաքուր: Եթե նա չի կարողանում հաս-
կանալ հիվանդության էությունը, ապա պետք չէ, որ դեղ
տա հիվանդին, որպեսզի չարատավորի իր անունը: Իսկ
եթե նա անգետ է, ապա ավելի լավ է նրան չհրավիրել հի-
վանդի մոտ և ընդհանրապես նրան բժիշկ չհամարել:*

ԱՄԻՐՂՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ

Միջնադարի խոշոր բժշկապետ Ամիրղովլաթ Ամասի-
ացին հայ բժշկության մեջ շարունակել է Մխիթար
Չերացու օրոք ձևավորված ավանդույթները, ստեղծել
առաջին հայկական դեղագիտական հանրագիտարանը:
Նա եղել է հայ ականավոր բնագետ-բժիշկ, մատենագիր,
բառարանագիր:

Հայ բժշկապետը ծնվել է 1420-ին, Փոքր Ասիայի Ամա-
սիա քաղաքում, որը մեծ թվով հայ բնակչություն, դպրոց-
ներ և եկեղեցիներ ուներ: Դա քաղաքական փոթորկալից
ցնցումների շրջան էր, երբ Հայաստանի արևմտյան նա-
հանգներն ընկան թուրք-օսմանների տիրապետության
տակ: Շրջել է Արևելքի երկրներում, ծանոթացել ժամա-
նակի առաջավոր գիտությանը: Բժշկությունը սովորել է,
հավանաբար, Միջագետքում: Տիրապետել է հայերենին,
հունարենին, լատիներենին, պարսկերենին, թուրքերե-
նին, արաբերենին, ուսումնասիրել է հին և միջնադարյան
բժշկությունը: Երկար տարիներ ապրել է Կոստանդնու-
պոլսում, գուցե և ականատես է եղել 1453-ին Կոստանդ-
նուպոլսի գրավմանը Մահմեդ Երկրորդի կողմից, քանի
որ նա հայրենի քաղաքից տեղափոխվել և բնակություն է
հաստատել այս հռչակավոր մշակութային կենտրոնում,
որտեղ և հավանաբար բժշկական դասընթացներն անցել
է հմուտ բժիշկների մոտ: Քառորդ դար հետո՝ կյանքի
մայրամուտին, Ամիրղովլաթն այդ մասին հետևյալն է
գրել. «Ապա ես ճամփա ընկա թափառելու զանազան քա-
ղաքներ, անցա ծովով, շրջեցի մակեդոնացվոց երկիրը և
բնակություն հաստատեցի Կոստանդնուպոլսում»:

Այստեղ Ամիրղովլաթը շուտով լայն ճանաչում է ձեռք
բերում իբրև բժիշկ և հրավիրվում է Մահմեդ Երկրորդ
սուլթանի պալատը՝ որպես նրա անձնական բժիշկ՝
ստանալով «ճառահպաշի ըռամատանին» պատվավոր

տիտղոսը, որը բառացի նշանակում է «գլխավոր վիրաբույժ-ակնաբույժ»:

Ամիրդովլաթ Ամասիացին արդեն փորձառու և լայն գիտելիքների տեր հասուն բժիշկ էր, երբ 1459-ին Կոստանդնուպոլսում Շադի-բեկի որդի Վարդի խնդրանքով գրեց իր առաջին աշխատությունը՝ «Ուսումն բժշկության» վերնագրով, որի մեջ անտիկ բժիշկների՝ Հիպոկրատի, Գաղիանոսի և արաբական բժշկության ճանաչված հեղինակությունների՝ Առ-Ռազիի և Իբն-Սինայի ոգով քննության են առնված սաղմնաբանության, մարդակազմության, բնախոսության, դեղագիտության և հիգիենայի հարցերը: Բայց դրա հետ միասին Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկության» գրքում նկատելի է հեղինակի ձգտումը՝ վերանայելու հայ ժողովրդական բժշկության դարավոր փորձը դեղագիտության բնագավառում, որի նկատմամբ իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում բժշկապետը խոր հետաքրքրություն է ցուցաբերել: Այդ հետաքրքրության վառ արտահայտությունն էր իր առաջին «Ախրապատինը»՝ գրված 1459-ին: Կարևոր է նշել նաև, որ վաղ շրջանի իր այդ աշխատության մեջ նա փորձել է կազմել այսպես ասած «պարզ» և «բարդ» դեղամիջոցների բառարաններ, որոնցից հետագայում՝ գրեթե քառորդ դար անց, ստեղծվեցին նրա երկու սովոր աշխատությունները՝ երկրորդ «Ախրապատինը» և «Անգիտաց անպետը»: Անդրադառնալով առաջին «Ախրապատինին», որի ինքնագիրն այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում՝ պետք է նշել այդ գործի բացարձակ արժեքը հայ բժշկության պատմության համար: Իսկ «Ուսումն բժշկությանը» հետագայում հիմնովին վերանշակվել է հեղինակի կողմից, հարստացվել նոր բաժիններով, որոնք նվիրված էին փստաբանության և մահճաբուծության հարցերին: Այդ աշխատության կլինիկական մասի շարադրությունը, ըստ երևույթին, բավական երկար ժամանակ է պահանջել, այնպես որ Ամիրդովլաթի հետևյալ գիրքը՝ «Օգուտ բժշկության» վերնագրով, ավարտվել է 1469-ին, Ֆիլիպոպոլ քաղաքում (այժմյան Պլովդիվ քաղաքը Բուլղարիայում): Այս աշխատության մեջ մանրամասն շարադրված են հեղինակի հայացքները բժշկության բոլոր հիմնական հարցերի մասին, ընդ որում զարմանք է պատճառում հայ բժշկապետի գիտական լայն աշխարհայացքը և նախորդ բժշկական գրականության (և՛ անտիկ, և՛ արաբական) խոր իմացությունը:

Նրա կենսագրության այդ տասնամյա ժամանակաշրջանը, որի ընթացքում ստեղծվեցին մեծ բժշկապետի փորձն ընդհանրացնող այդ մեծարժեք երկերը, միաժամանակ հագեցած էր նրա անձնական կյանքում տեղի ունեցող դրամատիկ իրադարձություններով: Մի կողմից նա գնալով ավելի լայն ճանաչում էր ստանում որպես մարդասեր բժիշկ և տաղանդավոր գիտնական, իսկ մյուս կողմից՝ քրիստոնյա բժիշկը նախանձ ու բացահայտ ատելություն էր հարուցում իր թշնամիների մեջ, որոնք քիչ չէին մահմեդական տիրակալի պալատում:

Ստիպված լինելով հեռանալ մայրաքաղաքից՝ Ամիրդովլաթն անօգուտ չանցկացրեց արտաքսման տասը տարիները: Շարունակելով իր մարդասիրական պարտքը կատարել հիվանդների հանդեպ, հարուստ լինել թե աղքատ՝ Ամիրդովլաթը միաժամանակ ծանոթանում էր այն երկրների դեղաբույսերի հետ, ուր նրան նետում էր բժիշկ պերիողևտի (թափառաշրջիկի) ճակատագիրը՝ հաճախ փորձարարական հետազոտություններ կատա-

րելով դեղաբուծության բնագավառում:

70-ական թվականներին Ամիրդովլաթն աքսորից վերադարձավ Կոստանդնուպոլիս և, դատելով ձեռագրական մի շարք տվյալներից, կրկին հաստատվեց սուլթանի անձնական բժշկի պատվավոր պաշտոնում: Այդ տարիներին որոշակիորեն դրսևորվեց նաև մեծ բժշկապետի սերը հայ մատենագրության, հին աշխարհի բժիշկների և փիլիսոփաների ստեղծագործությունների նկատմամբ:

Ամիրդովլաթի «Անգիտաց անպետը», որը հանդիսանում է միջնադարյան հայկական դեղագիտության հանրագիտարան (ըստ որում՝ դեղանունները տրված են հինգ լեզուներով՝ հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն և պարսկերեն), պարունակում է 3500-ից ավելի բուժիչ բույսերի, կենդանիների և հանքային նյութերի անվանումներ ու նրանց հոմանիշները, իրավամբ համարվում է հայկական բժշկության գագաթը: Այդ գործի հետազոտությունն արդի բժիշկներին հնարավորություն է տալիս ծանոթանալու միջնադարյան հայ բժշկության դեղամիջոցների և առաջին հերթին բուսաբուծության հետ, որը նրա գործունեության ամենակարևոր բնագավառն էր:

Այսպիսով՝ հայ բժշկապետի երկարատև օգտակար կյանքը հագեցած է եղել բժշկական սխրանքով և նվիրվածությամբ, հետազոտություններով և դեղամիջոցների որոնումներով, ձեռագրեր հավաքելով ու փրկելով և գրքեր ստեղծելով: Բազմակողմանի ընդունակությունների տեր Ամիրդովլաթն օժտված էր նաև բանաստեղծական ձիրքով, որն իր արտահայտությունն է գտել նշված երկերում շռայլորեն շաղ տված ասույթներում և բանաստեղծություններում: Բժշկի պարտքի խոր գիտակցությամբ, բարոյագիտական բարձր պահանջներով են տոգորված Ամիրդովլաթի աշխատությունները: Նա հաճախ կանգ է առնում բժշկի բարոյական նկարագրի վրա: Այս պահանջներից շատերը ժամանակին ձևակերպել է դեռ անտիկ բժշկության հայրը՝ Հիպոկրատը:

Ա. Ամասիացին մահացել է 1496-ի դեկտեմբերի 8-ին, Թուրքիայի Բուրսա (այժմ՝ Բուրսա) քաղաքում:



«Կոչումով բժիշկ»

ü² Ü² ðæÛ² ÜÛ° ð

ՀՀ առողջապահության նախարարությունը՝ նախարար Արմեն Մուրադյանի նախաձեռնությամբ, սկսում է նոր՝ «Կոչումով բժիշկ» նախագիծը: Այն միտված է բարձրացնելու, վերաբժարելու բժշկի կարևոր դերն ու հեղինակությունը հասարակության մեջ: Նախագծի միջոցով ընթերցողի դատին կներկայացվեն Հայաստանում և նրա սահմաններից դուրս բնակվող հայ բժիշկների՝ մարդկանց ապաքինելուն, կյանքեր փրկելուն ուղղված ամենօրյա բարդ աշխատանքը: «Կոչումով բժիշկի» առաջին անդրադարձը նվիրված է մեր երկրի բժշկական ամենամեծ գերդաստաններից մեկին՝ Ֆանարջյանների ընտանիքին:



Հայաստանում և նրա սահմաններից դուրս բազմաթիվ գերդաստաններ են իրենց գործունեությամբ սերնդեսերունդ խթանել առողջապահության տարբեր ճյուղերի զարգացումը: Մեր պարտքն է այսօր հիշել, գնահատել և արժևորել ոլորտի այն նվիրյալներին, ովքեր իրենց ամենօրյա աշխատանքի շնորհիվ փրկել են հազարավոր կյանքեր:

Մեր երկրի բժշկական ամենամեծ գերդաստաններից մեկը Ֆանարջյանների ընտանիքն է, որը Հայաստանին տվել է բժիշկների չորս սերունդ:

Ֆանարջյան գերդաստանի բժշկական ճյուղը սկիզբ է առնում հորհրդային Հայաստանում ռենտգենառադիոուռուռուցքաբանական ծառայության հիմնադիր Բարդուղիմեոս Ֆանարջյանով: Նրա ղեկավարությամբ են կազմավորվել հանրապետական ուռուցքաբանական դիսպանսերը, ռադիոկենսաբանության բաժանմունքը, սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը: Բ. Ֆանարջյանը եղել է հորհրդային Միության մի շարք գիտական ընկերությունների նախագահ:

Նա ստեղծում և հիմնադրում է ռենտգենաբանների դպրոցը Հայաստանում, այնուհետև նաև ուռուցքաբանների դպրոցը, որը գործում է մինչև հիմա: Հետագայում հոր ուղին էր բռնելու նաև Վիկտոր Ֆանարջյանը: Նյարդային գործունեությանը վերաբերող նրա աշխատություններն անգնահատելի գանձ են դառնալու հայ բժշկագիտության համար:

Վիկտոր Ֆանարջյանը եղել է գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Սովետական Միության մեծ ակադեմիայի թղթակից-անդամ, 12 տարի՝ մեր ակադեմիայի փոխնախագահ:

Մյուս տղան՝ Կոնստանտին Ֆանարջյանը, շարունակում է հոր գործը՝ ռենտգենաբանությունը, մինչև հիմա:

Նյարդաբուժության ոլորտում նվաճումներ է արձանագրում նաև Վիկտոր Ֆանարջյանի որդին՝ անվանի պրոֆեսոր Ռուբեն Ֆանարջյանը:

«Երրորդ սերնդի ներկայացուցիչը մենք ենք՝ ես, եղբայրս՝ Սերգեյը, Դավիթ և Ելենա Ֆանարջյանները», - ասում է Ռուբեն Ֆանարջյանը:

Այսօր արդեն հայաստանյան տարբեր առաջատար բուժատատություններում աշխատում են Բարդուղիմեոս Ֆանարջյանի բազմաթիվ ժառանգները՝ միաժամանակ երեք սերնդի ներկայացուցիչները:

«Մեր ցեղի չորրորդ սերնդի ներկայացուցիչը տղաս է՝ Վիկտորը, ով զբաղվում է ուրոլոգիայով,- նշում է Ռ. Ֆանարջյանը,- իմ երագանքն է, որ իմ երկու թոռներից գոնե մեկը շարունակի մեր ընտանիքի սովորույթները»:

ԳԼԽՈՒՂԵՂԻ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԱՆՈԹԱՅԻՆ ՎԻՐԱՅԱՏՈՒԹՅՈՒՆ

«Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցի նյարդավիրաբուժության և գլխուղեղի կաթվածների բուժման մասնագիտացված կենտրոնում կատարվեց գլխուղեղը սնուցող խոշոր զարկերակից թրոմբի հեռացման բացառիկ վիրահատություն, որը Հայաստանում իրականացվում էր առաջին անգամ:

Ինչպե՞ս առավել մանրամասն լուսաբանելու համար գրուցեցինք կենտրոնի ղեկավար, ՀՀ ԱՆ գլխավոր նյարդավիրաբույժ, պրոֆեսոր Ռուբեն Ֆանարջյանի հետ:

- Խնդրում եմ հակիրճ ներկայացնել հիվանդության ընթացքը:
- Հիվանդն ընդունվել էր կլինիկա ներգանգային անևրիզմայի, այլ կերպ ասած՝ գլխուղեղը սնուցող անոթի պարկածն լայնացում ախտորոշմամբ, որը խիստ վտանգավոր հիվանդություն է և հիմնականում դրսևորվում է երիտասարդ տարիքում առաջացող արյունազեղումների ձևով: Անևրիզմայի վնասազերծման նպատակով նախատեսվում էր կատարել ներանոթային վիրահատություն: Նմանատիպ վիրահատություններն առաջին անգամ Հայաստանում իրականացվել են մեր կենտրոնում, և վերջին 4 տարիների ընթացքում վիրահատվել են ավելի քան 200 հիվանդներ:

Ինչո՞վ էր այս դեպքը տարբերվում մյուսներից:

- Նշված հիվանդի մոտ առկա էր անոթների խիստ ոլորվածություն և արտահայտված աթերոսկլերոտիկ ախտահարում: Վերջինս առանձին հիվանդություն է, որին բնորոշ է անոթների պատերի խոցոտումը և թրոմբոզացումը: Չնայած դրան՝ վիրահատությունն անցավ հարթ, և հաջողվեց վերացնել ապագա արյունազեղումների սպառնալիքը:

Վիրահատությունն ավարտելուց հետո, որպես պարտադիր փուլ, իրականացվում է ստուգիչ անգիոգրաֆիա՝ համոզվելու համար, որ անևրիզման փակված է, և գլխուղեղը սնուցող զարկերակներն անցանելի են: Հենց այդ ժամանակ հայտնաբերվեց գլխուղեղի աջ կիսագնդի մոտ 80%-ը սնուցող խոշոր զարկերակի խցանում՝ պարանոցի խոցոտված անոթից պոկված թրոմբով:

Ի՞նչ հետևանքներ կարող է թողնել այդ անոթի խցանումը:

- Այդպիսի խոշոր զարկերակի խցանումը գրեթե միշտ առաջացնում է գլխուղեղի աղետալի կաթված, որը հաճախ ավարտվում է անբարենպաստ ելքով՝ մահվամբ կամ անգիտակից վիճակով: Բարեբախտաբար ներկայումս մեր տրամադրության տակ առկա է «Ալտեպլազա» կոչվող դեղը, որը կա-

րող է լուծել առաջացած թրոմբը և վերականգնել գլխուղեղի սնուցումը: Այն ևս առաջին անգամ Հայաստանում հաջողությամբ կիրառվել է մեր կենտրոնում՝ ճակատագրի բերումով բժշկի կյանքը փրկելու նպատակով: Արդյունքում հաշմանդամության կամ վախճանվելու փոխարեն դեպքից մեկ շաբաթ անց նա կարողացել է վերադառնալ իր ամենօրյա աշխատանքին:

Արդյո՞ք այս դեղամիջոցը կարող է օգնել բոլոր կաթվածների դեպքում:

- «Ալտեպլազան» նախատեսված է գլխուղեղի իշեմիկ կաթվածների համար, իսկ գլխուղեղի արյունազեղումների դեպքում անգամ հակացուցված է: Կան նաև մի շարք սահմանափակումներ. այս դեղամիջոցը կարող է լուծել միայն փափուկ կազմ ունեցող և նոր առաջացած թրոմբը և արդյունավետ է, եթե կիրառվում է կաթվածի առաջացման պահից սկսած՝ 4-5 ժամվա ընթացքում: Ուստի չափազանց կարևոր է կաթվածի առաջին իսկ նշանների հայտնվելուն պես հիվանդին շտապ տեղափոխել կաթվածների մասնագիտացված կենտրոն:

Բայց չէ՞ որ բժիշկների և ազգաբնակչության շրջանում կարծիք կա, որ գլխուղեղի կաթվածներով հիվանդների տեղափոխությունը հակացուցված է:

- Դա անհեթեթություն է: Գլխուղեղի կաթվածի բուժումն ավելի հրատապ միջոցառումներ է պահանջում, քան սրտամկանի ինֆարկտի բուժումը: Ուստի միակ ճիշտ որոշումը հիվանդին անհապաղ կաթվածների մասնագիտացված կենտրոն տեղափոխելն է:

Ինչ՞և, վերադառնա՞նք մեր այսօրվա քննարկվող դեպքին:

- Խցանված անոթը հայտնաբերելուն պես տեղային՝ ներզարկերակային եղանակով ներարկվեց «Ալտեպլազան», որը, սակայն, ազդում է միայն թարմ թրոմբի վրա: Մինչդեռ խոցոտված աթերոսկլերոտիկ վահանիկից ծագած թրոմբն ամուր է, կարող է պարունակել կրակալման օջախներ և անգամ հյուսվածքի ու խոլեստերինի կտորներ: Ուստի զարմանալի չէր, որ «Ալտեպլազան»

չկարողացավ քայքայել թրոմբը և վերականգնել արյան շրջանառությունը:

Նմանատիպ դեպքերում գործի է դրվում ներանոթային նյարդավիրաբուժության ծանր հրետանին՝ թրոմբի ներանոթային հեռացումը հատուկ գործիքներով: Թրոմբի հեռացման համար գոյություն ունեցող բազմաթիվ գործիքներից այս մեկն առանձնահատուկ է նրանով, որ վերականգնում է արյան շրջանառությունն անմիջապես՝ նույնիսկ նախքան թրոմբի հեռացումը: Դա զգալի ժամանակ է տալիս վիրաբույժին՝ առանց շտապողականության և ապահով կերպով իրականացնելու վիրահատությունը: Բացի այդ, ի տարբերություն «Ալտեպլազայի», թրոմբի մեխանիկական հեռացումը կարող է իրականացվել կաթվածի առաջացման պահից երբեմն նույնիսկ 8-12 ժամ հետո:

Ի ուրախություն մեզ՝ թրոմբի հեռացումն ընթացավ առանց բարդությունների, և այժմ պոստենցիալ մահացու կաթվածի փոխարեն հիվանդի մոտ առկա է միայն ձախ ձեռքի թեթև թուլություն, որը ժամանակի ընթացքում կվերականգնվի: Այդ կապակցությամբ հատուկ շնորհակալություն են ցանկանում հայտնել մեր աշխատակից, ներկայումս ԿԿՁՀ-ում զինծառայությունն իրականացնող Տիգրան Խաչատրյանին:

Վերջում, խնդրում եմ, թվեք այն ներանոթային վիրահատությունների ցանկը, որոնք իրականացվում են Երևանի պետական բժշկական համալսարանի կաթվածների մասնագիտացված կենտրոնում:

-Մինչ վիրահատությունների ցանկը թվելը կցանկանայի նշել, որ բոլոր այս վիրահատությունները Հայաստանում առաջին անգամ իրականացվել են մեր կենտրոնում: Դրանք են՝ գլխուղեղի զարկերակային անևրիզմաների ներանոթային բուժում, արտերիոպլենոգ մալֆորմացիաների էմբոլիզացիա, կարոտիդ-կավերնոզ ֆիստուլաների ներանոթային բուժում, թրոմբի հեռացում, քնային և ներուղեղային զարկերակների ստենոտավորում, զարկերակ-երակային բերանակցումների էմբոլիզացիա, գլխուղեղի ուռուցքների անոթային համակարգի խցանում:

Սեպտեմբերի 15-ը Հրանտ Դինքի ծննդյան օրն է

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԵՂԵՈՆ

*Ի՞նչ գիտենք մեր նորոյա
նահատակների մասին*

ՀՐԱՆՏ ԴԻՆԷ, ՆԱ, ՈՎ ՓՈԽԵՑ ԹՈՒՐԲԻԱՆ



Հայ-թուրքական հարաբերություններն անհրաժեշտ է դուրս բերել 1915 մետր խորություն ունեցող ջրհորից...

Իմ զբաղեցրած դիրքն այսպես է բնութագրվում՝ ես երկու ինքնության և երկու գիտակցության կրող եմ: Առաջինը՝ թուրքաբնակ եմ, թուրքիայի հանրապետության քաղաքացի... Երկրորդը՝ հայ եմ: Բացի այն, որ թուրքիայի հայ համայնքի մասնիկն եմ, միևնույն ժամանակ էլ բարոյապես հանդիսանում եմ Հայաստանի և Հայկական սփյուռքի մասնիկը, ցեղակիցն եմ այդ մարդկանց:

Այս ամենով հանդերձ, եթե ոմանք զեթ մի պատճառ ունեն ձգտելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ապա իմ պատճառները առնվազն երկու անգամ ավելի եմ:

ՀՐԱՆՏ ԴԻՆԷ

Հրանտ Դինքը ծնվել է 1954-ի սեպտեմբերի 15-ին, Մալաթիայում, հայազգի Սարգիս Դինքի (Հաշիմ Քալֆա) և Սվազից սերող Գյուլվարդ Դինքի ընտանիքում: Վաղ մանկությունից դաստիարակվել է պապի մոտ, իսկ Ստամբուլ տեղափոխվելուց հետո, երբ նրա ծնողներն ամուսնալուծվել են, նա հայտնվել է Գետիկփաշա շրջանի հայկական մանկատանը, որտեղ էլ հանդիպել է իր ապագա տիկնոջը՝ Ռաբելին: Կարևոր է նաև այն, որ Դինքն իր կրթությունը ստացել է հայկական դպրոցներում:

Հրանտ Դինքը հայտնի էր որպես մեծ պահանջարկ ունեցող լրագրող, թուրքիայում հայերեն և թուրքերեն լեզուներով լույս տեսնող «Ակոս» թերթի գլխավոր խմբագիրն էր, իր ժամանակի ակնավոր մտավորականներից մեկը, ով հայտնի էր իր անվախ ելույթներով, քաղաքական ամենախճճված խնդիրները մեկնաբանող համարձակ հոդվածներով: «Ակոսը», ըստ էության, միակ հայալեզու ամսաթերթն է, որը լույս է տեսնում

Ստամբուլում՝ հանդիսանալով հայոց համայնքի ծայրը՝ սկսած 1996-ի ապրիլի 5-ից՝ ընդամենը 1800 տպաքանակով՝ նպատակ ունենալով բարձրացնել թուրքիայում ժողովրդավարության ու ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման խնդիրները, բարելավել հայկական համայնքի ու թուրք հասարակության հարաբերությունները:

Հրանտ Դինքը մեկն էր թուրքիայում ապրող հայ մտավորականներից, ով, չնայած նրան, որ իր ամբողջ կյանքի ընթացքում սպառնալիքներ էր ստանում թուրքիայում գործող ազգայնական խմբավորումներից, միևնույն է՝ հանգիստ չէր մնում: Նա միշտ իր մտահոգություններն էր հայտնում թուրքերի և հայերի միջև լարված հարաբերությունների վերաբերյալ: Ելույթ ունենալով մի շարք ժողովրդավարական հարթակներում և հասարակական կազմակերպություններում՝ Դինքը միշտ ընդգծում էր թուրքիայի ժողովրդավարացման, ինչպես նաև թուրքիայում խոսքի

ազատության, փոքրամասնությունների իրավունքների և, ընդհանուր առմամբ, մարդու իրավունքների և, հատկապես, թուրքիայում ապրող հայ համայնքի իրավունքների հարցը: Նա թուրքերի և հայերի միջև խաղաղություն հաստատելու շատ կարևոր խթան էր: Կան թուրքեր, ովքեր չեն ընդունում, որ իրենց նախնիները ցեղասպանություն են գործել: Ինչո՞ւ նրանք չեն կարողանում ընդունել ցեղասպանությունը: Որովհետև նրանք կարծում են, որ ցեղասպանությունը վատ բան է, որ նրանք երբեք չէին ցանկանա անել դա և այդ իսկ պատճառով նրանք չեն կարող հավատալ, որ իրենց նախնիները կարող էին կատարել նման բան: Հրանտ Դինքը հավատում էր, որ Հայկական Սփյուռքը հնարավորություն կունենա ազատ ապրելու՝ չենթարկվելով ճնշումների, առաջնահերթ հաշվի առնելով ապրողների մեծամասնության կարծիքը: Հասկանալով, որ բողոքները չեն փոխում Ցեղասպանության հարցը՝ Դինքը կոչ է անում երկխոսության. «Հայ-թուրքական հարաբերություններն անհրաժեշտ է դուրս բերել 1915 մետր խորություն ունեցող ջրհորից»: Ֆրանսիայում ընդունված օրենքից հետո, որը հանցագործություն էր համարում հայերի դեմ իրականացրած ցեղասպանության ժխտումը, Դինքը դեմ արտահատվեց այդ որոշմանը և անգամ, «Milliyet» թերթի պնդմամբ, գնաց Ֆրանսիա՝ ի նշան բողոքի:

Հարկ է հավելել, որ 2004-ի փետրվարի 24-ին տպագրվեց «Ակոսի»

առավել ազդեցիկ հողվածներից մեկը, որի հեղինակ Ջեփսիմե Գազալյանը փաստում էր, որ թուրքիայի առաջին կին-օդաչուն՝ Սաբինա Գյոքսենը, իրականում հայ է եղել, ավելին՝ այն հայ որբերից էր, որոնք որդեգրվել էին 1915-ից հետո: Այս ժամանակից ի վեր՝ Դինքը թուրք ազգայնականների կողմից պարբերաբար ենթարկվում էր սպառնալիքների, հետապնդումների՝ հաճախակի հարկադրված լինելով այցելել ոստիկանական բաժանմունքներ, քանզի Զրանտը բարձրաձայնում էր Զայկական հարցը, Զայոց Ցեղասպանության ընդունման անհրաժեշտությունը, որը կնպաստեր հայ-թուրքական երկխոսությանը՝ միևնույն ժամանակ կտրականապես հրաժարվելով լքել թուրքիան: Նա սիրում էր կրկնել, որ հայ է, բայց ծնվել է թուրքիայում, նաև թուրք հասարակության մի մասնիկն է ու չի ցանկանում փախչել... Արդյունքում՝ Դինքը դատապարտվեց սահմանադրության 301 հոդվածով, քանի որ քննարկումներ էր կազմակերպում ու հողվածներ էր գրում՝ դեմ դուրս գալով «երջանիկ է նա, ով իրեն թուրք է անվանում» նշանաբանին, որը անգամ հարկադրում էին սերտել թուրքական դպրոցներում: Իր վերջին հողվածում Դինքը գրում է. «Ես նման եմ աղավնու այս հասարակության մեջ, որը պետք է շատ աչալուրջ լինի, ուստի ես ճարպկորեն պտտում եմ գլուխս աջ ու ձախ, վերև ու ներքև, որքան հնարավոր է արագ, որ խուսափեմ շուրջս առկա վտանգներից... բայց ես չեմ սարսափում, քանի որ այս հասարակության մեջ աղավնիներին չեն կրակում...»

Ցավոք՝ իրականությունը դաժան գտնվեց... Զրանտ Դինքը սպանվեց 2007-ի հունվարի 19-ին, Շիշլիում գտնվող «Ակոսի» խմբագրատան առաջ, հետևից գլխին արձակված երեք հրազենային կրակոցներից: Մարդասպանը հեռանալուց գոչել էր «գյավուր», ինչը ենթադրելու հիմք է տալիս, որ սպանությունը կատարվել է ազգային հողի վրա: Սպանությունն իրականացնելու կասկածանքով թուրքական Սամսուն քաղաքի ավտոկայանում ոստիկանությունը ձերբակալել է 17-ամյա Օզյուն Սամաստին, ով առաջին իսկ հարցաքննության ընթացքում խոստովանել է իր մեղքը: Կասկածյալի հետքի վրա դուրս գալուն օգնել է նրա հայրը, ով մարդասպանի լուսանկարում ճանաչել էր իր որդուն: Լուսանկարը ստաց-

վել էր սպանության վայրում գտնվող դիտարկման տեսախցիկի միջոցով, որն այդ պահին արձանագրել էր փողոցի անցուղարձը: Ներկայումս ոստիկանները փորձում են պարզել՝ արդյո՞ք որևէ ազգայնական խմբավորման անդամ է ձերբակալվածը: Շատերը հավաստիացնում են, որ սպանությունը պատվիրված է եղել...

Ասում են՝ Դինքը փոխեց թուրքիան. նրա մահվան հաջորդ օրը հազարավոր թուրքեր ու հայեր՝ մոմերով, ծաղիկներով ու Դինքի լուսանկարներով շարժվեցին կենտրոնական թաքսիմ հրապարակից մինչ սպանության վայրը՝ ձեռքներին պահած «Մենք բոլորս հայ ենք, մենք բոլորս Զրանտ Դինքն ենք» ցուցանակները:

Պատմական արդարության վերականգնման, ժողովուրդների փոխըմբռնման, խոսքի ազատության և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության գործում ունեցած նշանակալի ներդրման համար Զրանտ Դինքին շնորհված նախագահի մրցանակը ստանալու համար թուրքիայից եկել էին Դինքի կինը՝ Ռաբել Դինքը, դուստրը՝ Դելաուա Դինքը և եղբայրը՝ Երվանդ Դինքը: Մրցանակը հանձնվել է Զրանտ Դինքի այրուն՝ Ռաբել Դինքին, ով հայտարարել է. «Զայաստանի նախագահի մրցանակը միաժամանակ և՛ պատվավոր, և՛ տխուր է ընտանիքի համար: Ես հանդգնված եմ, որ Զրանտը կցանկանար լինել մեզ հետ: Նա միշտ ասում էր, որ Զայաստանը մեծ հայրենիքն է, իսկ Սփյուռքը՝ փոքր կղզիներ են»:

« Աղանիները համոզեցին, ըսին, որ իրենց վրայ չեն կրակեր. Զրանդ հաւատաց: Թէպէտ երկչոտ՝ հաւատաց թէ աղանի մըն է: Բայց կրակեցին: Նախատեսած էր, մէկ քանի տարի առաջ ըսած էր ինձի. «Իմ մահը պիտի ըլլայ ոտքի վրայ՝ կանգնած, ոչ թէ պառկած՝ անկողինի մէջ»: Թող պառկի լոյսերու մէջ: Եթէ մեզի հարցնէք, ան միշտ յաղթական պիտի կանգնի՝ անաղարտ արձանի մը պէս»:

ԶԱՅՐՈՍ

«Նախկինում էլ էի կարդում նրան, բայց ասում էի «Սա ինձ չի վերաբերվում, որովհետև ես մաքուր հայ չեմ»: Զրանտ Դինքի մահը ստիպեց ինձ ամոթ զգալ, որովհետև նա ինձ նմաններին մոբիլիզացնել ցանկացող մարդն էր: Ես միշտ խուսափել եմ հայկական համայնքից, որովհետև հայերեն չգիտեմ... Փոքր ժամանակ անունս լսելիս հարցնում էին «Թուրք չե՞ս»: Միշտ ինձ վատ էի զգում ու կրկնում այն, ինչ մայրս էր ինձ սովորեցրել. «Ես հայ ծագումով թուրք եմ»:

Զրանտ Դինքը ստիպեց աշխարհին ավելի բաց հայացքով նայել: Զրանտ Դինքից առաջ ես պարզապես հայկական ծագում ունեի, իսկ հիմա ես հայ եմ... Սկսել եմ հայերեն սովորել: Երբեք հայ տղայի հետ չեմ հանդիպել, Զրանտ Դինքից հետո Սերհատի հետ ծանոթացա, նա խոսում էր Դինքի մասին, և այդ ամենը սկսվեց հայ լինելու հարցի շուրջ: Զրանտ Դինքը շատ կարևոր է հորս և մորս համար: Նրանք շատ են փոխվել: Նրանց շատ էր զարմացրել «Բոլորս հայ ենք» կարգախոսը, նրանք դա համեմատում էին իրենց անցյալի հետ և մտածում «Մի՞թե սա հնարավոր է»: Առաջին անգամ խոստովանեցին. «Մենք փոխել ենք մեր ազգանունը, որ դու որևէ խնդիր չունենաս...»: Զիմա, երբ խոսում ենք, հորս աչքերը արցունքով են լցվում, և նա նույնիսկ ասում է. «Կարծում ես պետք է վերականգնե՞մ իմ ազգանունը...»:

ԼԵՅԼԱ ՆԵՅՁԻ

«Ընդհանրապես չեմ հիշում՝ Զրանտի հետ երբ եմ ծանոթացել, կարծես նա միշտ կար: Շատ ժողովների ժամանակ եմ հետևել նրան: Միշտ նկատել եմ աչքերի խոնավությունը, նա էլ միշտ իմ զգացմունքայնությունն է նկատել: Ձայրույթս է նկատել: Երբեմն ինձ ասում էր. «Զանդարտվիր»: Զրանտին հետևելիս տեսնում էի, թե ինչպես էր նա միշտ ներքուստ արտասվում: Անհավատալի մարդ էր: Այսքան անդրադառնալ ապրածներից... Ի՞նչ համբերություն ուներ, դիմացկունություն... Ինչպե՞ս է դիմացել: Ձարմանալի մարդ էր: Այնքան խորն էր մտածում, այնքան էր հարցի մեջ և այնքան ճիշտ տեղում էր գտնվում, որ ... Ոչ այս ամենի վրա հիմնված ազգայնականություն ունեցավ, ոչ էլ դիմացիցի հանդեպ թշնամություն: Դրա համար պետք է Զրանտին հասկանալ, ինչ էր ուզում...»:

ՖԵԹԻՅԵ ՉԵԹԻՆ ԵՎ ԱՅՇԵԳՅՈՒՆ ԱԼԹՆԱՅ

ՃՅՄ ԱձՕձՁԻՆ՝Շ

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ

ՄԱՐԴ, ՈՎ ԱՇԽԱՐՀԻՆ ԹՈՒՅԼ ՉՏՎԵՑ ՄՈՌԱՆԱԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ը ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ
ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է (1915)



Կարդալով եվրոպական թերթերը՝ ես ծանոթացա հայ ժողովրդի ողբերգությանը: Ես այնպես էի ցնցված, որ որոշեցի այդ բոլոր ներկայացնել պատմական վեպով: Սիրիայում ես տեսա հայ երեխաների, պատանհների, քշված ժողովրդի դժբախտ բեկորների, որոնց աչքերում դրոշմվել էին անցյալի փառքն ու սարսափները:

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ

1933-ին հրատարակվեց մի վեպ, որը թույլ չտվեց աշխարհին մոռանալ Հայոց Ցեղասպանությունը... Վեպը կոչվում էր «Մուսա լեռան 40 օրը»: Այն լույս տեսավ շուրջ 1 մլն տպաքանակով, ապա թարգմանվեց աշխարհի 36 լեզուներով: Հարկ է նշել, որ այս գրական ստեղծագործության համար հիմք է ծառայել 1915-ին Կիլիկիայի Սուեդիայի շրջանի հայության հերոսական պայքարը թուրքական հրոսակների դեմ: Երբ տեղական թուրքական ինքնակառավարման մարմինները փորձեցին հայության արքայությունը իրականացնել, հայերը որոշում կայացրին դիմադրություն ցույց տալ՝ բարձրանալով Մուսա լեռ, որտեղ և կազմակերպեցին շուրջ 53 օր տևած ինքնապաշտպանություն՝ պարբերաբար հետ մղելով թուրքական զինված ուժերի հարձակումները: Վեպի հավաքական հերոսը հայ ժողովուրդն է՝ հատկապես մտավորականությունը, որի ներկայացուցիչները՝ Գաբրիել Բագրատյանը, Տեր Հայկազունը, Հաբեթ Իսկենդերյանը, Տիգրան Անդրեասյանը և ուրիշներ, տառապել, պայքարել և զոհվել են հայրենիքի համար: Այն գրելու համար գրողը 3 տարի Վիեննայի Մխիթարյան միաբանությունում ուսումնասիրել է հայոց պատմությունն ու մշակույթը, ծանոթացել նաև Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող փաստաթղթերին և գրուցել թուրքական կոտորածներից փրկված հայերի հետ: Դատապարտելով հայերի ցեղասպանությունը՝ Վերֆելն աշխարհին ահազանգում է Գերմանիայի ռազմածուր քաղաքականության արյունալի հետևանքների մասին, մուսալեռցիների հերոսական պայքարի օրինակով մարդկությանը կոչում անձնագոհ պայքարի: Վեպը մեծ հաջողություն է ունեցել ընթերցողների շրջանում, 1934-ին արժանացել է տարվա լավագույն վեպի միջազգային մրցանակին և այսօր էլ համարվում է Վերֆելի առանցքային ստեղծագործություններից մեկը: «Մուսա լեռան 40 օրը» վեպը լույս է տեսել այն ժամանակ, երբ ամբողջ մարդկությանը սպառնում էր ֆաշիզմը: Գերմանիայում այն արգելվել է և հրապարակավ այրվել:

Հայ ժողովուրդը երախտապարտ է Վերֆելին, քանզի վերջինս, ազգությամբ հայ չլինելով, կարողացավ ողջ ուժգնությամբ և կենդանի գույներով ներկայացնել Հայոց Ցեղասպանության պատմությունն ու հայերի ցուցաբերած հերոսությունը, ինչի արդյունքում «Մուսա լեռան 40 օրը» եղել ու մնում է Հայոց մեծ եղեռնի մասին պատմող աշխարհին անհասկանալի գրական ստեղծագործությունը:

Ֆրանց Վերֆելը ծնվել է 1890-ի սեպտեմբերի 10-ին, Պրահայում: Ապագա գրողի հայրը մեծահարուստ վաճառական Ռուդոլֆ Վերֆելն էր, որը տեղի հրեական համայնքի պատվավոր անդամ էր: Վերֆելը, ըստ էության, հայտնի է դարձել իր «Բերնադետի երգը» վեպով, որն էլ 1943-ին ֆիլմի է վերածվել Յուլիուս Երբ գրողը հիտլերյան հետապնդումներից խուսափելու նպատակով բնակվում էր ԱՄՆ-ում, իսկ իր առաջին բանաստեղծությունները տպագրել է 1910-ին: Սովորել է Ֆրանց Կաֆկայի և Մակս Բրոդի հետ նույն ուսումնարանում, այնուհետև՝ Լայպցիգի և Համբուրգի համալսարաններում: 1911-12 թթ. ծառայել է ավստրիական բանակում, այնուհետև տեղափոխվել Լայպցիգ՝ աշխատելով Քուրթ Վոլֆ հրատարակչությունում՝ որպես խմբագիր: 1915-17թթ. նա ավստրիական բանակի շարքերում մասնակցում է Առաջին համաշխարհային պատերազմի մարտերին: 1938-ին Ավստրիայի ֆաշիստական օկուպացումից հետո ստիպված է լինում տեղափոխվել Ֆրանսիա, այնուհետև՝ 1940-ին, կնոջ և գրող Հենրիխ Մաննի ու նրա ընտանիքի հետ Ֆրանսիայից անցնում է Իսպանիա ու Պորտուգալիա, այնտեղից էլ՝ ԱՄՆ: 1941-ին դառնում է ԱՄՆ քաղաքացի: Վերֆելը հանկարծամահ է եղել 1945-ի օգոստոսի 26-ին, ԱՄՆ-ի Բեվերլի Հիլզում, թաղվել է հենց այդտեղ: Հետագայում նրա աճյունը երախտազետ մի խումբ հայերի կողմից Կալիֆորնիայից տեղափոխվել է Վիեննա, և նրա պատվին կանգնեցրել են խաչքար: Մահվան 50-րդ տարելիցի կապակցությամբ ՀՀ-ում թողարկվել է նամակահիշ՝ Ֆրանց Վերֆելի դիմակարով: Մեծ եղեռնի հուշահամալիրի պատին փակցված է հուշատախտակ, որի տակ ամփոփված է Վերֆելի գերեզմանից բերված հողով սափորը:

«ՄՅՆ» «ԻՅՍՄ» «ՆԱ

ԺԱՆ ԺՈՐԵՍ

Հայ ժողովրդի բարեկամներից մենք ավելի շատ բան գիտենք Ֆրիտյոֆ Նանսենի, Ալեքսանդր Գրիբոյեդովի, Ջ.որջ Բայրոնի, Յոհաննես Լեփսիուսի և այլոց մասին: Այս թողարկմամբ ցանկանում ենք ձեզ ներկայացնել ոչ այնքան հայտնի, սակայն հայ ժողովրդի լավագույն բարեկամներից մեկին՝ Ժան Ժորեսին:



Իր հրատարակություններում, հողվածներում և ելույթներում նա բազմիցս բողոքել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում հայերի նկատմամբ սուլթանական կառավարության բիրտ կամայականությունների և դաժանությունների դեմ: 1896-ի նոյեմբերի 3-ին, 1897-ի փետրվարի 22-ին և մարտի 15-ին Ֆրանսիայի խորհրդարանում արտասանած իր ճառերում դատապարտելով հայկական կոտորածները և եվրոպական երկրների՝ մասնավորապես Ֆրանսիայի անտարբերությունն այդ հարցի վերաբերյալ՝ նա նշում է. «Ինչպիսի՞ կատարյալ լռություն լրատվության կողմից, որին ինձ հայտնի մի կուսակցություն ուղղակի կամ անուղղակի վճարել է լռելու համար, լռություն իր մեծ հանդեսից, որի գլխավոր ներդրողները օսմանյան շահառուներն են, սակայն, հատկապես Ֆրանսիայի կառավարության լռությունը: Ինչպե՞ս ամբողջ այդ հեղեղված արյան առջև, այդ ոչնչացումների և վայրագությունների առջև, Ֆրանսիայում խոսքի և մարդու իրավունքների այս ճնշման առջև ոչ մի ճիշ դուրս չեկավ ձեր բերաններից, ոչ մի խոսք դուրս չեկավ ձեր գաղափարներից, և դուք լուռ վկա եք, հետևաբար ջարդերի կատարյալ մեղսակից...»:

Համիդյան ջարդերին Ժ. Ժորեսն անդրադարձել է նաև 1903-ի փետրվարի 15-ին Փարիզում արտասանած իր ճառում. «Եկել է ժամանակը, որպեսզի Եվրոպայի հասարակական կարծիքը վերջապես շարժվի մեռյալ կետից... Յոթ տարի առաջ Հայկական

հարցում մեծ տերությունների բռնադիրքի համար և՛ մենք, և՛ Եվրոպան ներկայումս հատուցում ենք այն դժվարություններով, որոնցով հղի է մակեդոնական հարցը: Այս երկարաձգված անտարբերությունը, այս երկար անհրազեկությունը հիրավի դարձան մեծագույն հանցագործություն, որը սրբեց հրեշավոր սպանությունների հետքերը... Եթե Եվրոպայի այդ լռելյայն ու պասիվ կարեկցանքը մեծ հանցագործություն էր, այն միաժամանակ նաև մեծ սխալ էր... Հայաստանի հանդեպ մեր վարվելակերպը սրանից յոթ տարի առաջ խրախուսեց սուլթանին և այն հանցագործություններն ու անօրինականությունները, որոնք միշտ էլ խռովություններ են հարուցում»:

Նա արձագանքել է նաև 1909-ի Կիլիկիայի ապրիլյան կոտորածներին և, նկատի ունենալով երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեին, «Հունամիտեում» (1909, ապրիլի 4) գրել է. «Լիբերալները ներգրավվել են հետադիմության բանսարկությունների մեջ, և հայերը կոտորվեցին, ինչպես կարմիր սուլթանի լավագույն օրերին»:

Երկար տարիներ Ժ. Ժորեսը եղել է նաև «Pro Armenia» երկշաբաթաթերթի խմբագրական կոմիտեի անդամ: Ժան Ժորեսը սպանվել է 1914-ի հուլիսի 31-ին, Փարիզում՝ Ռաուլ Վիլենի կողմից: Թաղվել է Փարիզի Պանթեոնում: Հայոց ցեղասպանության թանգարանինստիտուտը թողարկել է հրեյլանական բացիկ՝ Ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչ ու հայասեր Ժան Ժորեսի 150-ամյա հրեյլանի կապակցությամբ:



Ֆրանսիացի հասարակական-քաղաքական գործիչ, սոցիալիստ և հայասեր Ժան Ժորեսը ծնվել է 1859-ի սեպտեմբերի 3-ին, Կաստրում: 1885-ին ընտրվել է Կաստրի պատգամավոր: Իր քաղաքական գործունեության սկզբնական շրջանում՝ 1880-ական թվականներին, նա համագործակցում էր հանրապետականների հետ, սակայն 1893-ից հարում է սոցիալիստական խմբին: 1902-ին Ժ. Ժորեսը գլխավորում է սոցիալիստական աջ կուսակցությունը, իսկ 1905-ին՝ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության հետ միավորումից հետո՝ միացյալ սոցիալիստական կուսակցության աջ թևը: 1904-ին նրա ջանքերով հիմնադրվեց «Հունամիտե» թերթը:

ՈԳՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Բարի ճանապարհ, Վարդապետ, վերադարձ բարի...
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

êÇñ»ó»ù Çñ³ ñ, ß³ i ëÇñ»ù,
aña»ë¼Ç³ añ»ù...

ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Այս տարի, Կոմիտասի 145-ամյա տարեդարձի առիթով, «Սինոն Զավարյան» հասարակական կազմակերպությունը (ղեկավար՝ ԵՊԲՀ մաշկաբանության ամբիոնի դասախոս Գագիկ Շահվերդյան) «Ոգու վերադարձը» խորագրով միջոցառումների մի ամբողջ շարք է ծրագրել, որին ամենայն ակտիվությամբ մասնակցել են նաև մեր ուսանողները:

Առաջինը կայացավ հունվարի Կոմիտասի անվան պանթեոնում: Կոմիտաս վարդապետի շիրիմի մոտ նշվեց իրավաբան-դիվանագետ, պետական-քաղաքական գործիչ, անսակարկ հայրենասեր Դանուշ Շավերդյանի ծննդյան տարեդարձը, ով, անտեսելով բազում վտանգներ, իր և հարազատների կյանքը վտանգելով, դժնդակ 36-ին հայրենադարձեց Մեծ Զայի աճյունը:



«Կոմիտաս» պուրակում նշվեց «Կոմիտասը ծիրանենուն հենված» մոնումենտալ արձանի բացման տարեդարձի օրը:

Մարտի 2-ին՝ պանթեոնում և 3-ին՝ ԶԳ ԳԱԱ պատմության ինստիտուտի սրահում նշվեց երաժշտագետ, կոմիտասագիտության ռահվիրա Ալեքսանդր Շավերդյանի հիշատակի 60-ամյակը:

Մայիսի 28-ին նշանավոր պանթեոնում նշվեց Կոմիտասի աճյունի հայրենադարձման օրը:

Յերթական միջոցառումը տեղի ունեցավ Կոմիտասի տանը՝ Կոմիտասի անվան զբոսայգում, պանթեոնի հարևանությամբ կառուցված «Կոմիտաս վարդապետի թանգարան-ինստիտուտ և մշակութային կենտրոն» համալիրում:

Կոմիտասի շիրիմի մոտ հավաքվել էին երիտասարդներ, որոնց համար թանկ ու հարազատ է «Կոմիտաս» երևոյթը: Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Արա Սարգսյանի անվան գեղարվեստի ակադեմիայի, Մխիթար Զերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողներն ու երիտասարդ այգեհատիկները հարգանքի տուրք մատուցեցին հայոց հանճարին և, առաջինները լինելով՝ անցան «Կոմիտասի տան» շենք:

Տերունական աղոթքից հետո, նորակերտ համալիրի դահլիճում Գ. Շահվերդյանը ներկայացրեց տարվա և օրվա խորհուրդը. «Ուղիղ երկու տարի առաջ՝ այս օրը, հայաստանյան լրատվամիջոցներն ավետեցին. «... ԶԳ նախագահը «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2012-ի մայիսի 30-ի խորհրդի նիստում առաջարկեց Կոմիտասի անվան զբոսայգում՝ պանթեոնի հարևանությամբ, հիմնել Կոմիտասի թանգարան մշակութային կենտրոն...»: Ողջ հայության հետ, մեծ էր այգեհատիկներիս հիացմունք-հրճվանքը: Հիացած, բայց նաև զարմացած էինք. չէ՞ որ մենք նախորդներին էլ էինք դիմել, որպեսզի... «Կոմիտասի անվան զբոսայգում, հայ մեծերի պանթեոնի հարևանությամբ գտնվող, դեռևս 90-ականների կեսերից սեփականաշնորհած և կիսաքանդ դարձած շենքը («Պլանետարիում»), որպես ազգի, պետության և հայ պետականության

գերակա շահ, ժողովրդական հանգանակության միջոցով փրկագնվի և վերածվի Կոմիտասի պետական թանգարան-ինստիտուտի»: Բայց, հիմա, ոչ միայն «Պլանետարիումի» 400 քմ-ն, այլև (ո՞վ կերագեր) ևս լրացուցիչ 800 քմ տարածք...

Բանախոսը, ի հիշատակ Ալեքսանդր Շավերդյանի, այգեհատիկների կողմից, թանգարանին ընծայեց «Կոմիտասը վեղարով» նկարը՝ պարզաբանելով. «2011-ին Կոմիտասի հայրենադարձման 75-ամյակի տոնակատարությունների օրերին, երբ շնորհալի գեղանկարիչ Անդրանիկ Սահակյանն ինձ նվիրեց այս կտավը, երագում էի. «Թանգարանը բացվեր ու այն տեղադրեիք լույսի այս տաճարում»: Վստահ եմ՝ գեղանկարի ու քանդակի վարպետները դեռ շատ գլուխգործոցներ կնվիրաբերեն այս սրբավայրին, բայց, ինչպես մեծն թունամայանն է ասում՝ «Շատը՝ ուժից, քիչը՝ սրտից»:

Ապա շինարարության ղեկավար Զուհան Կոստանյանը Կոմիտասի նկարը տեղադրեց դահլիճում՝ բեմի դիմաց:

Երիտասարդ ջութակահար Գևորգ Վարդանյանը կատարեց կոմիտասյան ստեղծագործությունների՝ մենակատարման համար (առանց նվագակցության) իր մշակումները՝ պարտավորվելով մշակումների շարքն ամբողջացնելուց հետո նվիրել թանգարանի գրադարանին, բացի այդ՝ «Երևան» երիտասարդական քառյա-

կի հետ ստեղծագործությունն ամբողջությամբ կատարել այս հոյակերտ տաճարում:

Կոմիտասյան դասը վարեցին պատմաբան-արխիվագետ Սոս Մարտիրոսյանը, արվեստագետ Արթուր Թարմինյանը, երգիչ-երգահան Արսեն Համբարյանը (նա նաև կատարեց Կոմիտասի էպիկական «Մոկաց Միրզեն»), վերլուծաբան Նիկոլայ Շահվերդյանը: Նրանք հավաքվածների հետ զրուցեցին Կոմիտասի, նրա աճյունի հայրենադարձման, հայ մտքի, մշակույթի, արվեստի բոլոր ճյուղերի վրա ունեցած կոմիտասյան ազդեցությունների մասին, երիտասարդներին հորդորեցին աչքի լույսի պես պահել-պահպանել մայր-հայրենին և կոմիտասամշակ հայ երգը:

Բեմը նորից տրամադրվեց կոմսերվատորիայի սաներին: Երգիչ Արմեն Մկրտչյանը կատարեց «Կուժն առա», «Լոռվա զութաներգ», «Կռունկ» ստեղծագործությունները, ասպիրանտ Արմինե Խաչատրյանի հետ՝ «Հաբրբան» կատակերգը: Արմինե Խաչատրյանը և մագիստրատուրայում սովորող Արմինե Վարդանյանը հանդես եկան կոմիտասյան զուգերգերով: Այնուհետև Գ. Շահվերդյանը իր հայրենակից այգեհատցիների և ապագա բժշկների կողմից խնդրեց երգիչներին, ի հիշատակ Երևանի պետական բժշկական համալսարանի նախկին ռեկտոր (1936-37թթ.), շնորհալի գեղանկարիչ, ստալինյան բռնադատումներից տուժած աննկուն Արամ Շավերդյանի (մայիսի 31-ը նրա հիշատակի օրն է), կատարել «Կարոս խաչ» ասքերգը և Կոմիտասի «Ազգային օրհներգը» («Հայրապետական օրհներգ»):

Երաժիշտ-երգիչները հիացած էին համերգասրահի ակուստիկայով (լսելիականությամբ)՝ մանեցնելով այն Կոմիտասի անվան կամերային



երաժշտության տան դահլիճին՝ վերանորոգումից առաջ:

Ապագա բժշկներն իրենց դասախոսի հետ կարդացին հատվածներ Զարենցի՝ Կոմիտասի հիշատակին՝ Սևակի «Անլռելի զանգակատուն», Լևոն Միրիջանյանի «Երգի հովիվը» պոեմներից, իսկ բանաստեղծ-քառյակագիր Լիպարիտ Սարգսյանը՝ Թումանյանին և Կոմիտասին նվիրված իր քառյակներից:

Բոլորը երջանիկ էին, հուզված և հպարտ էին նաև այգեհատցի երիտասարդները, բայց նաև տրտում. ոչ մի կերպ չեն կարողանում լուծել հայրենի գյուղի «Կոմիտաս» գողտրիկ ակունքի վերանորոգման խնդիրը: Ճարտարապետ-շինարարները նրանց խոստացան օգնել նախագծային-նախահաշվային և շինարարական աշխատանքներում, ուսանողներն էլ պարտավորվեցին իրենց ընկերների հետ կազմակերպել բարեգործական համերգներ, քանդակի և նկարի ցուցահանդեսներ, նաև՝ կոչով դիմել «Հայաստան», «Փյունիկ», «Հայաստանի երիտասարդական» հիմնադրամների, «Լոռվա ձոր» ՀԿ-ի աջակցությանը: Երիտասարդները պայմանավորվեցին աշնանը՝ համալիրի զանգակատան զանգի օժան-

տեղադրման արարողության ժամանակ, կազմակերպել ծառատունկ, համերգ, մատաղի արարողություն: Այգեհատցիները հասակակիցներին հրավիրեցին գյուղ՝ կազմակերպելու երիտասարդական բանակումներ, քանդակի և նկարի սիմպոզիումներ, ակունքը վերագործարկելուց հետո՝ նաև համերգ-ներկայացումներ:

Անբռնազբոս, մտերմիկ մթնոլորտ էր. խոսում էինք, հիշում, երգում, նորից պատմում, հեռախոսահամարներ ու էլեկտրոնային հասցեներ փոխանակում, ծրագրում, պայմանավորվում:

Հիմա ցանց, թե ժամերն ինչպես անցան...

Հրաժեշտին Գ. Շահվերդյանը վստահություն հայտնեց, որ տրամաբանական ավարտին կհասցվի սկսած գործը: Արհեստավարժ նվիրյալների աշխատանքային խումբ կհավաքվի, և թանգարան-ինստիտուտ մշակութային կենտրոնը նոր շունչ կհաղորդի կոմիտասագիտությանն ու խազագիտությանը, Կոմիտասի գործերի ժողովրդականացմանը:

Հ.Գ. Տոնական օրն ամպոտվեց-ստվերվեց, երբ վերադարձանք պանթոն. երիտասարդներիս մտահոգեց փխրուն, քնքուշ, բայց արի Տերյանի շիրմաքարը, որը, ոչ միայն հարևան «հսկաներից», այլև սալահատակից էլ ցածր էր...

ՎԱՐՇ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ԽՈՂԻԿՅԱՆ

ԵՊԲՀ ընդհանուր բժշկության
ֆակուլտետի ուսանողներ

Լուսանկարները՝ Հովիկ Դավթյանի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՁԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՐՑԱՇԱՐ՝ ՉՅՈՒ-ԴՈ ՄԱՐՁԱԶԵՎԻՑ

Երևանում անցկացվեց Հայաստանի Հանրապետության 15-րդ ուսանողական մարզական խաղերի ծրագրով նախատեսված մրցաշար՝ ծյու-դո մարզաձևից:

Պետք է ասեն, որ նախորդ նույնատիպ մրցումներն անց էին կացվել դեռևս 2013-ին, և նման երկար ընդմիջումը բացասական իր ազդեցությունն էր թողել ԲՈՒՀ-ում այդ մարզաձևի պահպանման վրա:

Ինչևհետե, այս մրցումներին մեր թիմը ներկայացավ տասնհոգանոց կազմով: Սակայն բավականին խիստ պահանջներ ներկայացնող հանձնաժողովը իրավունք տվեց մասնակցելու միայն 5 մարզիկի՝ Դավիթ Բակունցին(111 խումբ), Վարդան Կարապետյանին(188 խումբ), Լևոն Սարգսյանին(192 խումբ), Սլավ Գալստյանին(430 խումբ) և ուսանող-մագիստր Դավիթ Իշխանյանին(564/2 խումբ):

Մեր տղաները շատ հաջող հանդես եկան և գրավեցին երկու 4-րդ և երեք 3-րդ տեղեր: Դավիթ Բակունցը և Լևոն Սարգսյանը իրենց քաշային կարգերում զբաղեցրին 3-րդ պատվավոր տեղերը: Չորրորդ տեղեր գրավեցին 81կգ քաշային Սլավ Գալստյանը և 75կգ քաշային Վարդան Կարապետյանը:

Ցանկանում եմ ուշադրության արժանացնել մեկ այլ բրոնզե մեդալակրի՝ Դավիթ Իշխանյանին: Նրա առաջին գոտեմարտը հաջող չստացվեց՝ դատավորների կողմնակալության և մրցավարական նոր կանոնների պատճառով: Դա այնքան վրդովեցրեց Դավիթին, որ նա մյուս հանդիպումները վերջացրեց միայն մաքուր հաղթանակներով և ժամանակից շատ շուտ: Բայց թե եղածը եղած էր, և նա բավարարվեց 3-րդ տեղով:

Եկող տարի այս նույն մրցումները պետք է անցկացվեն թիմային հաշվարկով, իսկ մրցամակակիրներից կկազմվի ծյու-դո մարզաձևի ՀՀ հավաքական, որը կմասնակցի



Լուսանկարում՝ ծախից Ռաֆիկ ժամկոչյան, Դավիթ Իշխանյան, Աշոտ Հակոբյան(թիմի մարզիչ), Վարդան Կարապետյան, Դավիթ Զյոսաբաբյան, Սլավ Գալստյան, Դավիթ Բակունց, Լևոն Սարգսյան, Հովհաննես Սարգսյան



համաշխարհային ուսանողական մարզախաղերին: Մեր թիմից Դավիթ Իշխանյանն ունի հնարավորություն ընդգրկվելու այդ հավաքականում:

Մրցաշարին մասնակցում էին հանրապետության ինը ԲՈՒՀ-եր, և քանի որ այս մրցումներն անց էին կացվում երկարատև ընդմիջումից հետո, որոշվեց դրանք անցկացնել ոչ թե թիմային, այլ անհատական հաշվարկով:

Վերջում պետք է նշեն, որ թիմի պատրաստման գործում ոչ պակաս նշանակություն ունեն դահլիճի վիճակը և գույքային անբավարար հագեցվածությունը: Ըմբշամարտի դահլիճի գոնե կոսմետիկ վերանորոգումը ցանկալի և օգտակար կլիներ:

Ա. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
թիմի մարզիչ

ՍՈՍ ՀՄԱՅԱԿԻ ՄԻՍԱԿՅԱՆ



Երևանի պետական բժշկական ինստիտուտի կենսաբանության ամբիոնում՝ որպես ասիստենտ, դոցենտ, ապա՝ 1989-2008 թվականներին ղեկավարել է Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական կենսաբանության և գենետիկայի ամբիոնը:

1986 թվականին Ս. Միսակյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ նվիրված սրտամկանի ինֆարկտի ժամանակ սրտի նյարդային ապարատում և անոթային համակարգում տեղի ունեցող տեղաշարժերի առանձնահատկություններին և ֆարմակոլոգիական դեղամիջոցներով դրանց կանխարգելման հարցերին: Նրա կողմից մշակվել և ներդրվել է փորձարարական պայմաններում սրտամկանի արյան մազանոթային համակարգի մանրադիտակային հայտնաբերման և նրա ֆունկցիոնալ վիճակի ուսումնասիրման նոր մեթոդ, ինչպես նաև բացահայտել է, որ սրտամկանի մազանոթային համակարգի ռեակցիան վազոակտիվ նյութերի նկատմամբ առավել արտահայտված է սրտամկանի հիպերտրոֆիայի զարգացման վաղ շրջանում:

1988 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Պրոֆեսոր Միսակյանը «Բժշկական կենսաբանություն» բուհական դասագրքի, ինչպես նաև 200 գիտական աշխատությունների հեղինակ է, որոնք հրատարակվել են ինչպես նախկին միութենական, այնպես էլ՝

եվրոպական բժշկական հանդեսներում: Գիտական գեկուցումներով պրոֆ. Ս. Միսակյանը բազմիցս հանդես է եկել միջազգային կոնգրեսներում:

Սրտի մազանոթային համակարգի մանրադիտակային հայտնաբերման մշակված նոր մեթոդի համար նրան շնորհվել է հեղինակային իրավունք: Նույնպիսի իրավունքի է արժանացել նաև նրա կողմից առաջարկված մանրադիտակային պատրաստուկներում մազանոթների խտության քանակական որոշման մեթոդը:

Մեծ է եղել Սոս Հմայակի Միսակյանի ավանդը երիտասարդ սերնդի դաստիարակության գործում: Նա էությամբ ռոմանտիկ և հայրենասեր անձնավորություն էր և նույն զգացողությամբ աշխատում էր դաստիարակել նաև բարձրագույն ուսումնական հաստատություն ուղք դրած երեկվա դպրոցականներին՝ բժշկական համալսարանի առաջին կուրսեցիներին:

Նրան ճանաչողների՝ ուսանողների, գործընկերների հիշողության մեջ դեռ երկար կապրի Սոս Միսակյանի մասին լուսավոր հուշը:

Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանը խորին ցավակցություն է հայտնում հարազատներին և մտերիմներին՝ նրա մահվան կապակցությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՉԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

78 տարեկանում կյանքից հեռացավ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոս Հմայակի Միսակյանը:

Սոս Հմայակի Միսակյանը ծնվել է 1936 թվականին, Արարատի մարզի Այգեգարդ գյուղում:

1961 թվականին նա ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը:

1969 թվականին ավարտել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական դիսերտացիա՝ նվիրված փորձարարական պայմաններում գլխուղեղի նյարդային բջիջների և արյան մազանոթների մորֆոֆունկցիոնալ առանձնահատկություններին:

1970 թվականից աշխատել է

Ըստ ընդունելության քննությունների արդյունքների

Այս տարի Հայաստանի ԲՈՒՀ-երի դիմորդների թիվը նվազել է: Այս մասին նշում են ոչ միայն ԲՈՒՀ-երի ընդունող հանձնաժողովները, այլև՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը:

Ավելին, ուսանողների պակասի հարցը լուծելու աննախադեպ տարբերակ կիրառեց ազրարային համալսարանը՝ առաջին անգամ առանց ընդունելության քննությունների, հիմք ընդունելով միջնակարգ դպրոցի ավարտական վկայականի արդյունքները, ընդունեց առաջին կուրսեցիներին:

Ուրախությամբ պետք է նշել, որ ինչպես փաստեց Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Կոնստանտին Մանուկ-

յանը՝ բժշկական համալսարանում պատկերն անհանգստացնող չէ՝ չեն մնացել թափուր տեղեր:

Նա նշեց նաև, որ բժշկական համալսարանը դիմորդների քանակի առումով միշտ էլ առանձնացել է, քանի որ այստեղ ստանում են այն մասնագիտությունը, որի մասին երազում են մանկուց, և դիմորդն արդեն զալիս է կողմնորոշված: Հավանաբար հենց դա է հիմնական պատճառը, որ ԵՊԲՀ-ում երբևէ թափուր տեղեր չեն մնում: Ըստ Կ. Մանուկյանի ներկայացրած տեղեկատվության՝

այս տարի ԵՊԲՀ-ում դիմորդների թիվը եղել է 981, ընդունվել է 735 դիմորդ, որից 24-ը՝ ԼՂՀ քաղաքացիներ:

ԲՈՒՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Պետական ԲՈՒՅ-երը և տեղեկատվական տեխնալոգիաների ոլորտի առաջատար կազմակերպությունները համատեղ կրթական ծրագրեր են իրականացնելու՝ միավորելով ուժերը որակյալ մասնագիտական կադրերի պատրաստման հարցում: Ինչպես տեղեկացնում է ԿԳՆ մամուլի ծառայությունը՝ կողմերի միջև համագործակցության համաձայնագիր է ստորագրվել:

Եռակողմ պայմանագիրը կնքվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, “Technology and Science dynamics” ընկերության և տեղեկատվական տեխնալոգիաների բնագավառի մասնագետներ պատրաստող հայաստանյան մի քանի խոշոր ԲՈՒՅ-երի՝ Երևանի պետական, Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարանների, Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայի, Չայաստանում ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտի և Չայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջև:

ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը կարևորել է նախաձեռնությունը՝ շեշտելով, որ բուհական կրթության զարգացման կարևոր խնդիրներից մեկը ԲՈՒՅ-աշխատաշու-

կա համագործակցության խթանումն է:

“Technology and Science dynamics” ընկերության տնօրենի հավաստմամբ այդ ընկերությունը Չայաստանում իրականացնելու է արտադրական գործունեություն, բայց նպատակ ունի զբաղվելու նաև գիտահետազոտական աշխատանքներով: Այդ ուղղությամբ առաջին քայլը ակադեմիական ու արտադրական պոտենցիալների միավորումն է, որը նպատակ ունի նոր տեմպ հաղորդել տնտեսության ու բարձր տեխնալոգիաների զարգացմանը:

Չուլազրի ստորագրումից հետո կկազմվեն աշխատանքային խմբեր, որոնք արդեն կհստակեցնեն, թե համագործակցությունն ինչ ուղղությամբ է ընթանալու: Ըստ փաստաթղթի՝ ընկերությունները կազմակերպելու են հուլազիրը ստորագրած ԲՈՒՅ-երի ուսանողների պրակտիկական, իրականացվելու է ուսանողների այցելություններ ընկերությունների գրասենյակներ ու արտադրամասեր, ինչպես նաև դասախոսություններ, գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ: “Technology and Science dynamics”-ը պատրաստակամություն է հայտնել նաև ֆինանսավորել ու կյանքի կոչել ուսանողների կողմից առաջարկվող նորարարական տեխնալոգիական գաղափարները:

ՆՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ՝ ՀԵՄՈՍՏԱԶԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վերջերս Երևանի Մ.Չերացու անվան պետական բժշկական համալսարանի «Չերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի ռադիոլոգիայի կենտրոնին «Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից նվիրաբերվեց Ստագո ֆիրմայի «Ստարտ 4» կոագուլացման վերլուծիչ: Սարքավորումն ունի մի շարք առավելություններ՝ հետազոտության արդյունքները կախված չեն արյան մուշի օպտիկական հատկություններից (հնարավոր է հետազոտել նաև լիպեմիկ, իկտերիկ, պլոտոր մուշներ), հնարավորություն է տալիս ճշգրիտ որոշել ֆիբրինոգենի քանակությունն անգամ արտահայտված հիպոֆիբրինոգենեմիայի դեպքում, ունի արյան մուշի մեջ ՄՆԳ (INR) հաշվարկելու հնարավորություն:

Հիշեցնենք, որ կոագուլացման վերլուծիչը (կոագուլոմետր) նախատեսված է հեմոստազի հետազոտության համար, և նման թանկարժեք նոր սարքավորման առկայությունը համալսարանական հիվանդանոցի լաբորատոր-



րիայում հնարավորություն կտա ապահովել հետազոտության արդյունքների որակն ու հուսալիությունը:

New Equipment to Examine Hemostasis in YSMU

Recently the Radiology Center of YSMU Heratsi N1 Hospital Complex received a “Start 4” Coagulation Analyzer (Stago) by “Concern-Energomash” CJSC.

The equipment has several advantages such as: the results do not depend upon optical characteristics of blood sample (it is also possible to examine lipemic, icteric and other samples); it gives the possibility to properly define

quantity of fibrinogen even in the case of hypofibrinogenemia; it has a capacity of calculating INR in blood sample.

Worth mentioning that the Coagulation Analyzer is foreseen to examine hemostasis, and the existence of such expensive equipment in the University Hospital laboratory will give the possibility to ensure the quality of examination results.

ՄՐՏՆԵՐԱ ԲԱՅԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋ

«Ապագա բժշկի» լավագույն ընթերցողներից մեկը՝ բժշկական համալսարանի հնդիկ շրջանավարտ Գուրպրիդ Սինգի, իր հայ ընկերների համար գրառում է ուղարկել՝ իրենց մոտ նշվող մի տոնի մասին, որը ոչ միայն հուզեց ինձ, այլ՝ բառիս ամենախսկական առումով, նախանձաշարժեց. Յնդկաստանում՝ ի թիվս բազմազան, բազմաբնույթ, բազմաբովանդակ հարյուրավոր տոների, նշում են քույր-եղբոր տոն:

Մենք շատ ենք հպարտանում այն հանգամանքով, որ հայկական ընտանիքը ամուր է, հարազատների կապը՝ չափազանց սերտ, միմյանց նկատմամբ պարտավորվածությունն ու հոգատարությունը՝ անսահման: Այս ամենը, ինչ խոսք, կա՝ այս կամ այն չափով:

Սակայն, խոստովանենք՝ ինքնասիրահարվածության այս դրսևորումը գործնական այնքան էլ ամուր հիմքեր չունի: Մենք ասում ենք՝ սիրում ենք, հարգում ենք, պարտավոր ենք, մեծարում ենք... Եվ միայն այսքանը: Ուրիշները այս ամենին առավել գործնական հենք են տալիս. ունեն տոներ՝ նվիրված ընտանիքի անդամներին: Մենք հաճախ ենք համեմատություն դնում մեր բարոյական արժեքների և Արևմուտքի՝ ընտանիքի նկատմամբ ունեցած ոչ պահպանողական վերաբերմունքի միջև: Ինքներս գերազնահատում ենք մեզ, ուրախանում... իսկ Արևմուտքը նշում է ընտանիքի ավագ անդամների՝ պապիկ-տատիկների օրը: Ունե՞նք մենք այդպիսի տոն: Այն դեպքում, երբ հիմա գնալով հազվադեպ են դառնում ընտանիքներ, ուր համատեղ են բնակվում նրանք և իրենց զավակներն ու թոռները: ԱՄՆ-ն՝ սեպտեմբերին, աշխարհի 30 երկրներ տարբեր ամիսներին նշում են տատիկների, տատիկ-պապիկների օրը:



Համաձայնենք՝ մայրիկների օրն անգամ հավուր պատշաճի չենք նշում. խնդրում են մարտի 8-ով կամ ապրիլի 7-ով չառարկել: Աշխարհում տարածված տղաների՝ պատանի դառնալու, աղջիկների՝ օրիորդ համարվելու տոները ևս մեր տոնացույցից բացակայում են: Մինչդեռ դրանք



հնարավորություն կտային ընտանիքին՝ կենտրոնացնել իրենց ուշադրությունը ընտանիքի երիտասարդ անդամների վրա: Այս տոնին, որը յուրաքանչյուրի կյանքում մեկ անգամ է լինում, բնավ չեն փոխարինում ծննդյան տարեդարձերը:

Հերթը հասավ վերոնշյալ՝ քույր-եղբոր տոնին:

Զմեծամտանա՞նք մեր ավանդույթներով, կարողանանք նկատել ուրիշների բարոյական արժեքները, գնահատել, արժևորել և, անհրաժեշտության դեպքում՝ ընդօրինակել:

Իսկ այժմ անդրադառնանք այդ տոնին, որը խորհրդանշում է քրոջ և եղբոր ջերմ հարաբերությունները և կրում է ռաքշա բանդիան կամ ռաքի տոն անվանումը: Այդ օրը քույրը եղբոր դաստակին է կապում գույնզգույն մի թել, որով նա եղբորից պաշտպանություն է խնդրում, իսկ եղբայրը խոսք է տալիս հոգ տանել նրա մասին: Այս օրը թշնամանքին վերջ է տրվում, և նոր կյանքի սկիզբ է դրվում:

Այս տոնի հետ կապված մի լեգենդ կա: Յնդկաստանի նահանգներից մեկի թագուհի Ռանի Կարմավաթի վրա հարձակվում է հարևան նահանգի թագավորը՝ Գուջարաթը: Այդ ժամանակ Կարմավաթին իր եղբորը՝ Դելիի թագավոր Յունայուն մետաքսե մի թել է ուղարկում, որը նշանակում է օգնության և պաշտպանության խնդրանք: Թագավորը մի մեծ բանակ է ուղարկում քրոջն օգնության: Սակայն օգնությունն ուշանում է, և Գուջարաթը սպանում է Կարմավաթիին: Երբ Յունայուն տեղեկանում է այդ մասին, պատերազմում է Գուջարաթի հետ, վերցնում է իր քրոջը պատկանող նահանգը և տալիս է այն Կարմավաթիի տղային՝ ներողություն խնդրելով, որ չկարողացավ օգնել ու փրկել քրոջը:

Ի դեպ՝ Ռաքի տոնի օրը աղջիկը կարող է թել կապել նաև այն տղայի դաստակին, ում ցանկանում է, որ լինի իր եղբայրը: Բացի թել կապելուց՝ քույրը եղբոր ճակատին տիլակ (կարմիր նշան) է դնում, քաղցրեղենով հյուրասիրում, իսկ եղբայրն էլ նրան նվեր ու դրամ է տալիս:

ՍԵՂԱ ԹՈՐՈՍՅԱՆ

2014-Ը «ՅԵՐԱՑԻ» ՅԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԵԿԴԱՐՅԱ ՅՈՒԲԵԼՅԱՆԻ ՏԱՐԻՆ Է

Այս հիվանդանոցը ժամանակին հանրապետական առաջին հիվանդանոց էր կոչվում, այն էլ` Լենինի անվան:

Բակում Լենինի արձանն էր տեղադրված: Խորհրդային տարիներին սա նշանակում էր, որ այն եղած հիվանդանոցներից առաջինն էր, ամենագլխավորը: Գաղտնիք չէ, որ ողջ հանրապետության

համար այն, իրոք, ամենագլխավորն էր:

2014-ը մեր հնօրյա հիվանդանոցի 100-ամյակի տարին է: Այսօր այն կոչվում է` Առաջին, Յամալսարանական, «Յերացի» հիվանդանոց: Երեք որակումներն էլ նշանակում են, որ հիվանդանոցը շարունակում է մնալ

ամենաառաջինը,

ամենագլխավորը, ամենահեղինակավորը:

Աշխարհում համալսարանական հիվանդանոցները միշտ էլ ամենահեղինակավորն են, քանի որ նմանատիպ հիվանդանոցներում բուժմամբ զբաղվում են բարձր որակավորում ունեցող գիտնական-բժիշկները:

Նույնը վերաբերում է նաև մեր համալսարանական հիվանդանոցային համալիրներին:

Նոյեմբերին Երևանի պետական բժշկական համալսարանը հանդիսավորությամբ կնշի իր հիվանդանոցային համալիրի մեկդարյա հոբելյանը: Բոլոր նրանց, ովքեր ունեն հետաքրքիր փաստեր, լուսանկարներ, հիշողություններ այս հաստատության և նրա երախտավորների մասին, սիրով կապասենք մեր խմբագրատանը:



Պատմական ակնարկ

Երևանի պետական բժշկական համալսարանական համալիրի բաղկացուցիչ մասերից է քաղաքային թիվ 1 կլինիկական հիվանդանոցի շենքը, որի հիմնադրման պատմությունը արժանի է հետաքրքիր ու առանձին անդրադարձի:

Երևանի քաղաքային դումայի 1893 թվականի որոշմամբ գործող միակ բուժաստատությամբ՝ ներկայիս Բյուզանդի փողոցի վրա գտնվող ամբուլատորիային կից ստեղծվում է ստացիոնար բաժանմունք: Այն չափազանց փոքր էր. ուներ ընդամենը 12 մահճակալ՝ 7-ը տղամարդկանց, 5-ը կանանց համար: Սա, իհարկե, չէր կարող բավարարել քաղաքի պահանջները, և իշխանությունները որոշում են մինչև առանձին շենքի կառուցումը վարձակալել մասնավոր տներ:

Ի դեպ՝ քաղաքի ճարտարապետ Ստուպաչևսկին նախագծում է շենքը, որը, սակայն, միջոցների բացակայության պատճառով մնում է թղթի վրա: Համաձայն երիվանի քաղաքային հիվանդանոցի 1908 թվականի հաշվետվության ռուսերեն հրատարակության՝ այդ տարի Նազարովյան փողոցի 2 տներում հիվանդանոցն ուներ 70 մահճակալ. բացի վիրաբուժականից, թերապևտիկից, մանկաբարձականից, կային նաև հոգեբուժական և ակնաբուժական բաժիններ:

Քաղաքային դուման 1906 թվականին մի քանի նիստ էր հրավիրում՝ օրակարգում ունենալով 1 հարց՝ հիվանդանոցի կառուցումն ու դրա համար գումար գտնելը:

Եվ ահա, "Эриванския обявления" թերթի առաջին էջերում սկսեցին տպագրվել հողատարածքներ աճուրդով վաճառելու մասին հայտարարություններ, որից գոյացած հասույթն ուղղվելու էր հիվանդանոցի կառուցմանը: Այդ տարի վաճառվեց նաև անգլիական այգու մի հատվածը: Սակայն, դարձյալ փողը չբավականացրեց: Միջամտեց Նիկոլայ Շուստովը՝ հայկական կոնյակին հռչակ բերած գործարանատերը, ով ըմբռնելով խնդրի լրջությունը, Աստաֆյան՝ ներկայիս Աբովյան փողոցի սեփական հողատարածքը նվիրաբերում է ապագա հիվանդանոցին:

Լինելով գործի մարդ՝ նա պայմանագիր է ստորագրում Երևանի քաղաքային դումայի հետ, համաձայն որի 3 տարում շինարարությունը չսկսելու դեպքում՝ հետ էր վերցնելու հողը:

Իհարկե, քայլը շինարարությունը արագացնելու պարտադրող յուրատեսակ, ազդեցիկ կոչ էր: Քաղաքային իշխանությունները, իրենց երախտագիտությունը հայտնելով Շուստովին,

խոստացան բուժարանում մշտապես ունենալ 1 անվճար մահճակալ՝ բարերարի անունով: Դուման, ոգևորված նաև այլ բարերարների որոշակի նվիրատվություններով, որոշում է 100 մահճակալով հիվանդանոց կառուցել՝ նախագծի համար հատկացնելով 1.000 ռուբլի: Ճարտարապետի ընտրությունը կանգ է առնում Պողոս Ջուրաբյանի՝ նույն ինքը՝ Պավել Ջուրաբովի վրա, ով արդեն հայտնի էր Թիֆլիսի Արամյան և Ջուրաբով հիվանդանոցների նախագծերով: Վերջապես, 1914 թվականին, ներկայիս Աբովյան 54 հասցեում դրվում է քաղաքային հիվանդանոցի հիմքը: Վայրը հրաշալի էր ընտրված՝ աղմուկից հեռու, խաղաղ վայրում, շրջապատված այգիներով ու բանջարանոցներով, իսկ հեռվից լսվում էր Գետառի քչջրոցը: 1916 թվականի սկզբին արդեն կանգուն էր երկհարկանի հիվանդանոցի շենքը, իսկ ամռանը սկսվեցին ներքին հարդարման աշխատանքները:

1917 թվականին, երբ առաջին աշխարհամարտը դեռևս ընթացքի մեջ էր, ու Երևանում տեղակայված էին կովկասյան ճակատում կռվող բազմաթիվ զորամասեր, հիվանդանոցի արդեն շահագործման պատրաստ շենքը անցնում է Ելիզավետպոլի գնդի տրամադրության տակ: Սակայն, որպես զինվորական հոսպիտալ, այն քիչ է ծառայում, քանի որ նույն տարվա նոյեմբերին տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական զինուժը սկսում է տարերայնորեն լքել մեր տարածաշրջանը: Հաջորդ տարիին 1918 թվականն էր՝ հայոց համար իշարժան ու բեկումնային թվական: Հռչակվում է Հայաստանի անկախ հանրապետությունը, գաղթականներով լեցուն, համաճարակներից շնչասպառ երկրում բուժիմնարկներն առավել քան անհրաժեշտ ու կարևոր էին: Նույն տարում հիվանդանոցում բացվում են վիրաբուժական, մանկաբարձական-գինեկոլոգիական և թերապևտիկ բաժանմունքները, և շենքը սկսում է գործել ըստ նշանակության: Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ, բարերախտաբար, հիվանդանոցը չի տրվում այլ գերատեսչության և գործում է առողջապահության ժողկոմատի կազմում: Այստեղ աշխատանքի են անցնում այնպիսի անվանի բժիշկներ, ինչպիսիք էին Սպանդարատ Կամսարակյանը, ով նաև հիվանդանոցի գլխավոր բժիշկն էր, Գրիգոր Արեշյանը, Արտաշես Մելիք-Ադամյանը, Հարություն Սիրզա-Ավագյանը, Գրիգոր Մեղնիկյանը, Հովհան Գաբրիելյանը, Անդրեաս

Արզումանյանը, Համբարձում Քեչեկը և այլոք՝ հիրավի նվիրյալներ, ովքեր իրենց իմացություններն ու փորձն էին հաղորդում երիտասարդ բժիշկներին: Հետագայում, կարևորելով նրանց գործունեությունը, մի քանիսի անուններով կոչվեցին հիվանդանոցի բաժանմունքներն ու, նույնիսկ, առանձին հիվանդանոցներ:

1930-ական թվականներին որոշվում է շենքի վրա ավելացնել նաև երրորդ հարկը, ինչը, ճիշտ է, ճաշակով է արվում և չի խաթարում ընդհանուր ճարտարապետական տեսքը, սակայն, ըստ երևույթին, հաշվարկները սխալ են կատարվում, և տասնամյակներ անց կառույցը սկսում է նստվածք տալ: 1970-ական թվականներին այն ամրացվում է, բայց դա արվում է չափազանց տգեղ, և ոչ ակնահաճո պատկերն այսօր էլ տեսանելի է Աբովյան փողոցից:

Քաղաքային հիվանդանոցի տեղն ու դիրքը 1920-30-ական թվականներին Ալեքսանդր Թամանյանին թելադրում են մայրաքաղաքի առողջապահական ավանը տեղադրել գլխավոր հատակագծի հենց այս հատվածում և մնացած շենքերի նախագծումը հարմարեցնել հիվանդանոցի շենքի հետ: Հետագայում, ստացվում է առողջապահական համալիր, որի սիրտը, ասես, դառնում է սև տուֆից կառուցված պատկառելի առաջնեկը: Տասնամյակներ շարունակ թիվ 1 հիվանդանոցը, որը, ի դեպ, նախկինում կրում էր Լենինի անունը, Երևանում գլխավոր բժշկական կենտրոնն էր, գործում էր թե՛ որպես շտապօգնության, և թե՛ որպես հանրապետական հիվանդանոց: Այստեղ բազմաթիվ բարդ վիրահատություններ են կատարվել, հարյուրավոր կյանքեր փրկվել, հազարավոր հիվանդներ ապաքինվել, ովքեր, ինչպես 1960-ական թվականների կինոքրոնիկում է պատկերված, սրտացավությամբ պատասխանել են՝ իրենց գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնելով բժշկին:

Նախորդ դարի 1970-80-ական թվականներին մեր մայրաքաղաքում բազմաթիվ նոր, ավելի մեծ և, զուգե, ավելի շքեղ բուժաստատություններ բացվեցին, սակայն հին ու բարի առաջին հիվանդանոցը շարունակեց մնալ Երևանից հեռու գոհունակություններով ծնավորված ավանդույթների կառուցման վայրի, այլև հմուտ ու բանիմաց բուժանձնակազմի շնորհիվ:

ՀՈՒՐԵՆԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Օգտակար նախաձեռնություն



ԿԵՑՑԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

Մեր աշխատակիցների ֆեյսբուքյան գրառումներից

Հարգելի բժիշկներ և իրենց հավասարեցված անձիք, դատելով ձեր լայնքաշատ ուշադրությունից՝ հասկանում եմ, որ այն, ինչ մենք արեցինք օգոստոսի 24-ին՝ կիրակի օրը, հետաքրքրեց շատերին: Այդ պատճառով որոշեցի մի քիչ ավելի մանրամասնել:

Առավոտ էր, օգոստոսյան շոգ առավոտ, հավաքվեցին մի խումբ «պարապ» բժիշկներ:

Ինչու՞ «պարապ»... Որովհետև իրենց անձնական գործը այնքան քիչ էր, որ որոշեցին գնալ հեռավոր մի գյուղ՝ այնտեղի հիվանդներին զննելու, խորհուրդ տալու, բուժելու:

Առավոտյան 8-ին հավաքվեցինք: Չթվարկեմ ամեն մեկին՝ գովազդն արգելված է:

Բժիշկներից բացի մեզ հետ «ճանապարհ ընկան» նաև 2 զերծայնային հետազոտման սարք, արյան անալիզատոր, լիքը ուտելիք ու շատ բարձր տրամադրություն:

Ճանապարհը հիմնականում անցավ առանց խոչընդոտների՝ բացառությամբ Մ-4 մայրուղու 33 կմ-ի մեր կանգառից: Գտանք մի վիթխարի ծառ, մեծ արագությամբ սննդամթերքը վերածվեց շատ համեղ նախաճաշի, լուսի արագությամբ ոչնչացվեց, և նորից՝ ճանապարհ... Ոնց որ թաթայի երզը լինի...

Հասանք Տավուշի մարզ, անցանք Դիլիջանը, Իջևանը, անցանք բազմաթիվ գյուղեր և հասանք ադրբեջանական սահման: Ռազմական ոգին ստիպում էր շարունակել մեր պատերի և հայրերի գործը, բայց մենք շեղվեցինք մեր ճանապարհից ու գնացինք Այգեհովիտ... Հասանք:

Շատ մեծ գյուղ է, մոտ 1500 տնտեսությամբ, հենց սահմանի վրա: Դիմավորեցին, ուղեկցեցին, տեղավորվեցինք:

Հայկն անցկացրեց «պիժմիմիուտկան»:

Գործը սկսվեց... Գյուղացիների հոսքը շատ մեծ էր՝ մեկի սիրտն էր ցավում, մյուսի՝ ձախ ականջը, հաջորդի գլուխն էր քոր գալիս, մեկի մոտ էլ «կանացի» խնդիրներ էին: Միայն պաթանատոմը մնաց անգործ:

Տղամարդիկ շատ քիչ էին դիմում. կամ առողջ էին, կամ էլ գյուղապետն էր արգելել:

Բոլորին ընդունեցինք, ուշադիր լսեցինք, սոնո «զցեցինք», մի ահագին բուժումներ գրեցինք ու... սովածացանք:

Նստեցինք, մի լավ հաց կերանք (ոնց որ հենց դրա համար էլ գնացել էինք) ու էլի շարունակեցինք...

Ինչու ուտելու մասին այսքան քիչ գրեցի... Կար դա բառերով նկարագրել չի լինի... այդ ուտելուն պետք է ներկա գտնվել...

Արդեն ժամը 5-ին հասկացանք, որ էլ այցելու չունենք, մենք էլ հոգնել ենք, տուն ենք ուզում վերադառնալ:

Նորից ճամփա ընկանք՝ Դիլիջանը անցանք, հանդիպեցինք մի տատիկի՝ կուկուռուզ էր վաճառում: Կաթնային կուկուռուզ: Չտեսի պես (սա ինձ է վերաբերվում) ոչնչացրեցինք, մնաց մի հատ՝ փողը տվել էինք, բայց դե էլ ու՞ր... տատին խոստացավ, որ կհյուրասիրի առաջին իսկ մոտեցողին, բայց՝ հազիվ թե...



Արդեն հասնում էինք Սևան: Մեր մեջ սոված մարդ կար: Կպել ա՛՞ գնանք Ծաղկածոր: Հետ համոզեցինք, գնացինք Ծիրանի, մի լավ հաց կերանք, ուրախացանք, պայմանավորվեցինք, թե հաջորդ անգամ երբ ենք հանդիպելու, ուր ենք գնալու...

Ինչի այսքան բան գրեցի, հարգելի ու շատ սիրելի կոլեգա, եթե դու դեռ չես մոռացել անհատույց գործ անել, եթե քո մեջ դեռ կա երիտասարդական ավյուն (կամ արյուն), եթե դու ուզում ես անմոռանալի կիրակի անցկացնել՝ մենք պատրաստ ենք ու սպասում ենք...

Ցանկացած բժիշկ իրավունք ունի տնօրինելու իր ազատ ժամանակն այնպես, ինչպես ուզում է: Մեկը նախընտրում է զբաղվել սպորտով, մեկ ուրիշը ընկերների հետ ուրախ ժամանակ է անցկացնում, մեկ ուրիշն էլ հերթապահում է, հիվանդներ ընդունում: Մենք առաջարկում ենք համատեղել վերը նշված հանգիստները՝ այցելենք հեռավոր մի գյուղ, հիվանդներ ընդունենք, լավ ժամանակ անցկացնենք ու վերադառնանք տուն:

Այս շաբաթ օրը (30.08.2014թ.) այցելում ենք Գեղարքունիքի մարզ, գյուղ Շորժա: Անհրաժեշտ մասնագետներն են՝ սրտաբան, նյարդաբան, էնդոկրինոլոգ, գինեկոլոգ, մանկաբույժ, LOR, մաշկաբան, ուրոլոգ, լաբորատոր բժիշկ, սոնոգրաֆիստ...

Գտեք ԱՆՀԱՏույցի խումբը Facebook սոցիալական կայքում, միացեք մեզ:

Հարգանքով, սիրով և ակտիվ մասնակցության ակնկալիքով՝ Հովհաննես Հովհաննիսյան և մի խումբ ԱՆՀԱՏույց բժիշկներ

Իսկ ի՞նչ են ասում comment-ները.

ՏԻԳՐԱՆ ՈւԶՈւՆՅԱՆ. Հով, ապրեք: Համ ձեր այցն էր հզոր, համ էլ քո պատմածը, հատկապես որ 5 անգամ նշեցիր, թե ոնց մի կուշտ հաց կերաք: Տեքստի սկզբից արդեն քեզ հետ միասին հերթական հացն էի սպասում...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐՄՈՅԱՆ. Հով ջան բրավո: Եթե ձեզ վնասվածքաբան-օրթոպեդ պետք լինի՝ ես պատրաստ եմ:

ԱՐԵԳ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ. Արագ ավարտեք, որ մենք էլ միանանք:

Հ.Գ. Բոլոր արձագանքները (comment-ները) իմաստ չունի քվարկել, թեև դրանք շատ խոսուն են: Նախաձեռնությունը լավագույնս ներկայացնելու գաղափարությունը չափազանց մեծ էր. այդ նպատակով ցանկացա լուսանկարային ռեպորտաժի միջոցով այն ներկայացնել ամենայն մանրամասնությամբ, քանզի յուրաքանչյուր լուսանկար այնքան խոսուն է, որ մակագրության անհրաժեշտությունն բնավ չկա: Մնում է միայն բոլոր մասնակիցներին ասել՝ ապրեք, դուք շատ լավ գործ եք անում:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

